№ 28 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5 1908 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5 № 28

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

12 ամսվայ համար „ „	10 ր.
11 „ „ „ „	„
10 „ „ „ „	9 ր.
9 „ „ „ „	8 ր.
8 „ „ „ „	7 ր.
7 „ „ „ „	6 ր.
6 „ „ „ „	„
Մնացած ամիսները ամսական ՄԷԿ րուբլի	
Ամերիկա տարեկան „	6 դօլար
Եւրոպա „ „ „	30 ֆրանկ
Պարսկաստան „ „	10 րուբլի

Կիրակի, փետրվարի 10-ին
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Յօգուտ
ՀԱՅՈՒՀԵԱՑ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Կը կայանայ
ՊԱՐԵՐԵԿՈՅԹ
կօնցերտային բաժնով

Բարեհաճ մասնակցութեամբ դերասանուհի Մելքումովայի, տ. տ. Մերենբիւլումի, Սպենդիարեանի, Նաւասարդեանի, Մելիքօվա-Աֆրիկեանի, պ. պ. Շօրշտէյնի, Արժանեանի, օպեր. դերասան Նեստերովի, Դանովսկու, Քափանակեանի և այլն։

ՎԻՃԱԿԱԽԱՂ, ՉԻԱՐՃԱԻ (պտի-շվօ)

Պօստ, ծաղիկներ և բուֆետ մատչելի գներով։ Վաճակախաղի այն տոմսերը, որոնք կը վերջանան զրօյով, օրինակ՝ 10, 20, 30 և այլն, կը ստանան մի բաժին բլինի խաւիարով կամ թէյ պուտերբրօտով։

Մուտքի տոմսակը 2 ր. 20 կ.

Կանխիկ կամ մուտքում վճարողը կը ստանայ մի կուպօն։ Այդ կուպօնով իրաւունք ունի հանել վիճակատոմս։ Իւրաքանչիւր 100 տոմսակից մէկը վիճակախաղում տանում է 20 ր.։

Տոմսակի գինն է 2 ր. 20 կ., ուսուցիչներին՝ 1 ր., ուսանողներին՝ 50 կ.։

Տոմսակները վաճառվում են Արտիստական ընկ. Թատրօնի կասսայում, Սուզանաջեանի խանութում և Որբանոցում—Բէհբութեան փող. № 39.

Կօնցերտի սկիզբն է 9 ժ. երեկոյեան։
առ. 3—1

ԷԺԱՆ ԹԷ՞ ԹԱՆԳ

Հարցը վերաբերում է հացահատիկների գներին։

Ո՞րն է աւելի ձեռնտու մեր երկրի համար. այն, որ ցորենը, գարին և ուրիշ հացահատիկներ լինեն թանգ թէ էժան։

Եւ հարցը յաճախ դրվում է այսպէս. եթէ հիւսնը, դերձակը, կօշկակարը և ամեն մի արհեստաւոր ցանկանում են, որ իրանց պատրաստած իրերը ծախվեն թանգ գնով, որպէսզի նրանք տեսնեն իրանց աշխատանքը լաւ վարձատրված, պէտք է նոյնպէս մակաբերել, որ երկրագործն էլ կը ցանկանայ տեսնել իր արդիւնաբերած հացահատիկը լաւ գնահատված։ Եւ ուրեմն հացի թանգ գինը նոյնպէս մի հաճելի երևոյթ է երկրագործի համար, որքան հաճելի է հացի էժանութիւնը արհեստաւորի համար։ Այստեղից կարելի կը լինէր այն եզրակացութեանը գալ, որ հացի գների բարձրանալը նպաստաւոր մի երևոյթ է մեր երկրի համար, որի ազգաբնակութեան մեծամասնութիւնը, աւելի քան 80%-ը, բաղկացած է երկրագործ տարրից։

Այդպիսի հայեցակէտ ունեցողներ կան կովկասեան մասնագէտների մէջ մի որոշ թւով և մամուլի օրգաններից մէկում նոյնիսկ նա պաշտպանութեան արժանացաւ։

Եւ անկասկած՝ կան մեր երկրում շրջաններ կամ տնտեսութիւններ, որոնց համար հացահատիկների թանգ լինելը նպաստաւոր է և ձեռնտու, բայց ընդհանուր առմամբ նա ցանկալի երևոյթ չէ։

Արդարև՝ հացը կազմում է մարդկանց հանրային ամենաանհրաժեշտ կարիքը և նա, նախ և առաջ, կարևոր է հէնց իրան արդիւնաբերողի՝ երկրագործի համար։ Եւ եթէ որևէ պատճառով, օրինակ, անբերրիութեան կամ մի ուրիշ ձախորդութեան շնորհիւ, երկրագործը անկարող եղաւ հացահատիկի աջող բերք վերցնել, այն ժամանակ առաջին ամենամեծ վնասվողը և տանջվողը ինքը կը լինի։ Նա ստիպված պէտք է ծախի իր տնտեսութեան միւս իրերը, որպէսզի կարող լինի հաց գնել և ապահովել իրան ապրուստի կողմից։

Անշուշտ, մեզ կարող են առարկել, թէ անբերրիութիւնը կամ նրա նման մի ձախորդութիւն կրում է պատահական բնաւորութիւն և նրա դէմ կարելի է մաքառել շտեմարաններ բանալով գիւղերում և նրանց միջոցով հաւասարակշռելով լաւ ու վատ տարիների բերքը։

Այո, այդ այդպէս է։ Բայց եթէ փոքր ինչ ուշադիր կերպով ուսումնասիրենք մեր իրականութիւնը և վերցնենք ոչ թէ այս կամ այն հացաշատ փոքր շրջանները, այլ մեր ամբողջ երկիրը, կը տեսնենք, որ մենք, Անդրկովկասի ազգաբնակութիւնս, աւելի գնում ենք, քան ծախում, աւելի հաց ենք սպառում, քան մենք արդիւնաբերում ենք հացահատիկներ, աւելի հաց ենք ներմուծում մեր երկրի մէջ, քան արտահանում։

Եւ ուրեմն, վերջ ի վերջոյ, մեր ազգաբնակութեան բիւջէտից աւելորդ փող է դուրս գալիս հաց ձեռք բերելու համար։

Իսկ եթէ այդ այդպէս է, այն ժամանակ մեզ համար նպաստաւոր է հացի էժանութիւնը։

Եթէ ուշադրութեան առնենք նաև այն հանգամանքը, որ մեր գիւղատնտես ժողովրդի մի խոշոր զանգուածը զբաղված է այգեգործութեամբ, բամբակագործութեամբ և ուրիշ այնպիսի արդիւնաբերութիւններով, որոնք հաց չեն տալիս գիւղացու ձեռքը, այլ միայն փող, եթէ հաշւի առնենք, որ գիւղական պանդուխտների օրըստօրէ ստուարացող շարքերը թափառում են այս ու այն կողմ իրանց տնտեսական բիւջէտի պակասը լրացնելու համար, կը տեսնենք, որ հաց գնողների թիւը շատ մեծ է և ուրեմն հացի թանգ գինը դժբաղդութիւն է ժողովրդական ստուար մասսաների համար։

Հացի գները արդիւնք են համաշխարհային շուկայի դրութեան և մասամբ մի քանի երկիրների մաքսային սիստեմի։ Մեր երկիրն էլ շնորհիւ հաղորդակցութիւնների ընկել է համաշխարհային շուկայի ազդեցութեան տակ. բայց այն յատուկ դէպքերում և պայմաններում, ուր կարող են շեղվել այդ գները դէպի այս ու այն կողմը, ցանկալի չէ, որ նրանք բարձրանային և ժողովրդին, իբրև սպառողի, դնէին աննպաստ վիճակի մէջ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարդութիւնները Մերձաւոր Արեւելքում

«Մշակի» մէջ մենք իր ժամանակին առաջ բերինք աւստրիական արտաքին գործերի մինիստր բարօն Էրենտալի՝ պարլամենտում արտասանած երկու ճառերը, որոնք ահագին աղմուկ բարձրացրին, երևան հանելով մի նոր համաձայնութիւն, որ Աւստրիան կնքել է Թիւրքիայի հետ, Գերմանիայի աջակցութեամբ, համաձայնութիւն, որով Թիւրքիան նոր ոյժ է ստանում և որով կարելի է բացատրել նրա յանդուգն ոտնձգութիւնները Պարսկաստանում։

Սպասվում է մի նոր որոտում արեւելեան մթնոլորտում։

Այդ վերահաս որոտի առիթով «Слово» լրագիրը տալիս է հետևեալ առաջնորդողը.

«Դրութիւնը Մերձաւոր Արևելքում չափազանց բարդացաւ և շատ լուրջ է դառնում։ Այդ հերքել չի լինի, որովհետև այդ ակներև երևում է մի կողմից թիւրքաց զօրքերի կենտրօնացումից Պարսկաստանի և մեր Անդրկովկասի սահմանների վրա, իսկ միւս կողմից աւստրօ-թիւրքական համաձայնութիւնից, որի օգնութեամբ, զիջումների գնով մակեդօնական հարցում, Աւստրօ-Ունգարիան գնել է իր համար իրաւունք ուղղակի ճանապարհ շինելու «վարիագներից դէպի յոյները», այսինքն Բերլինից և Վիէննայից դէպի Պիրէյ։ Աւստրօ-Ունգարիայի ետևից, ակներև, կանգնած է Գերմանիան, և, հետևաբար, Թիւրքիան իր ձեռքերն արձակեց թէ մակեդօնական հարցում և թէ պարսկական սահմանը խախտելու հարցում։

«Ի հարկէ, յայտնի չէ, թէ ինչ չափով է խոստացված Բ. Դրանը աւստրօ-գերմանական աջակցութիւնը։ Արդեօք այդ աջակցութիւնը կարտայայտվի նրանով, որ իրանք ձեռնպահ կը մնան միջամտութիւնից վերոյիշեալ հարցերում, երբ հարկաւոր կը լինի այս կամ այն ճնշումը գործ դնել Թիւրքիային յետ պահելու համար օտարի հողի վրա աչք տնկելուց կամ մակեդօնական սլաւեաններին նախկին դրութեանը հասցնելու ձգտումից, կամ թէ ցուցմունք կայ, որ հնարաւոր է ակտիվ աջակցութիւն։ Դա մի գաղտնիք է, որ գիտեն միայն Կ. Պօլսում, Բերլինում և Վիէննայում, և որի բովանդակութեան մասին մենք միայն գուշակութիւններ կարող ենք անել։

«Սակայն, ըստ երևոյթին, վճռված հարց կարելի է համարել Բերլինի և Վիէննայի աջակցութիւնը Թիւրքիային այս կամ այն ձևով, և այդ հանգամանքը, անկասկած, համարձակութիւն կը տայ Բ. Դրանը անցնելու դէպի ակտիվ գործունէութիւն։

«Այդպիսի պայմաններում, Ռուսաստանից պահանջվում է շատ մեծ տոկունութիւն, զգուշութիւն կօնֆլիկտից խուսափելու և միևնոյն ժամանակ մինչև վերջը հասցնելու համար մակեդօնական ռէֆօրմները և չը թոյլ տալու, որ Պարսկաստանի հողային ամբողջութիւնը խախտվի, որը մենք Անգլիայի հետ միասին յանձն ենք առել պաշտպանել։

«Մենք շատ լաւ գիտենք, որ որևէ լուրջ կօնֆլիկտ ներկայումս ոչ մի կերպ չէ մտնում Ռուսաստանի շահերի մէջ։ Մեզ նախ և առաջ պէտք է հետաքրքրեն մեր ներքին գործերը և մեր առաջին գործը պէտք է լինի մեր ներքին վերակազմութիւնը, մեր թարմացումը, որը և միմիայն կարող է վերականգնել մեր հոգևոր և նիւթական ոյժերը։ Հէնց միմիայն այդ պատճառով Ռուսաստանը չէ կարող ցանկանալ կօնֆլիկտ և պէտք է ամեն ճիգ գործ դնել դրանից խուսափելու համար։

«Բայց եթէ այնուամենայնիւ ցանկանան օգուտ քաղել մեր ժամանակաւոր թուլութիւնից՝ մեզ համար արդէն նոր բարդութիւններ ստեղծելու Մերձաւոր Արևելքում, թող այդ կոմբինացիաներ ներշնչողները գիտենան, որ ռուս ժողովուրդը մինչև անգամ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան գործունէութեան, սկսած 1881 թ. մինչև այսօր՝ 1908 թ. փետրվարի 2-ը

(Զեկուցումն Հ. Առաքելեանի, կարդացված Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան 1908 թ. փետրվ. 2-ին կայացած արտակարգ ընդհանուր ժողովում)

I

Այսօր, երբ մենք գումարված ենք այստեղ ձեռնարկելու հանդիսաւորապէս մի ընկերութեան վերաբացման, որ իր անցեալում հայ ժողովրդի կուլտուրական հզօր գործօններից մինն է հանդիսացել և որին վիճակված է այսուհետև ևս աւելի մեծ և տոկուն կուլտուրական գործօն հանդիսանալ իր նոր կանօնադրութեամբ, թող թոյլատրվի ինձ, այդ ընկերութեան վաղեմի գործիչներից մէկին, կատարել այն հաճելի պարտաւորութիւնը, որ դրել է ինձ վրա ներկայ վարչութիւնը՝ ծանօթացնելու ձեզ այդ հզօր գործօնի անցեալ գործունէութեան պատմութեան հետ, համառօտ գծերով։ Եւ ես ձեզ չը պէտք է տամ մի բարեգործական, ուրեմն մի սահմանափակ ընկերութեան պատմութիւնը, ոչ, ես պէտք է ընդլայնեմ ձեր առաջ հօրիզօնը ռուսահայերի մտաւոր, բարոյական և կուլտուրական կեանքի 27-ամեայ մի շրջանի ընթացքում, որովհետև ծանօթանալ Կովկասի հայոց բարեգ. ընկերութեան պատմութեան հետ իր գոյութեան օրից մինչև այսօր՝ կը նշանակէ ամփոփ կերպով ծանօթանալ Կովկասի հայ ժողովրդի հոգևոր և կուլտուրական կեանքի հետ այդ շրջանի ընթացքում, և այդ այն պատճառով, որ Կովկասի հայոց բարեգ. ընկ. հանդիսացել է ոչ թէ մի զուտ և սահմանափակ բարեգործական հաստատութիւն, որի նպատակն է սփոփել, թեթևացնել տառապեալների առօրեայ կարիքը, վշտերը, ոչ, նա կոչված է եղել աւելի վեհ և բարձր դեր կատարելու։ Նա կոչված է եղել ոչ միայն նիւթական, այլ և մտաւոր, հոգևոր սնունդ և կաթ ջամբելու հայ ժողովրդին, և այդ միսիան նա կատարել է փառաւորապէս և, յոյս ունեմ, պէտք է կատարէ աւելի ևս փառաւորապէս այսուհետև, երբ նա մտնում է իր գոյութեան երրորդ փազիսի, աւելի լայն և ազատ փազիսի մէջ։

Այն պայմանները և այն տրամադրութիւնը, որոնց մէջ նա ստեղծվեց 27 տարի առաջ (ես՝ նրա ծագումը դնում եմ 1880 թ. մայիսի 27-ին, այն օրից, երբ «Մշակ» լրագրի այդօրվայ №-ի մէջ երևաց մի առաջնորդող յօդուած), պարզ ցոյց են տալիս, թէ նա որպիսի շարժման, լայն և կենսարար շարժման ու մտաւոր էվօլիւցիայի արգասիք է։

Մեր բազմաչարչար մայր-հայրենիքում, Հայաստանում, 1880 թ. սով էր տիրում։ Այդ սովը, ինչպէս և հայ ժողովրդի աղէտալի վիճակը, ժողովրդի, որ դեռ նոր՝ 3 տարի առաջ իր վրա էր գրաւել Եւրոպայի ուշադրութիւնը Բերլինի կօնգրէսի միջազգային ակտով, յուզել, շարժել էր Եւրոպան և նոյնիսկ ռուսաց կայսրը, անգլիական և ֆրանսիական պետութիւնները նուիրատուութիւններ էին արել յօգուտ սովեալների, և հայոց հարցը սկսել էր արծարծվել պարլամենտներում և միտինգներում։ Հայաստանի այդ թշուառ վիճակը, սովը չէր կարող չը յուզել և չը խռովել խորապէս այն ժամանակվայ հայ ինտելիգենցիայի միտքը և հոգին։ Այդ յուզման թարգման էին հանդիսանում մեծ գործիչներ՝ Գրիգոր Արծրունին և Րաֆֆին «Մշակի» միջոցով, որի շուրջն էին համախմբվել հայ ինտելիգենցիայի պրոգրէսիվ և լուսամիտ խաւերը։ Օգնել, օգնել հայրենիքին, հայ ժողովրդին, որ տառապում էր սովի ճիրաններում, խարխափում էր տգիտութեան և խաւարի մէջ, զրկված էր լոյսից—ահա առաջաւոր հայ մտքերի տենչանքը. բայց ինչպէս օգնել. չը կար մի կազմակերպված ոյժ, հաստատութիւն, որի միջոցով կարելի լինէր իրագործել այդ տենչանքը։ Եւ ահա «Մշակի» 1880 թ. մայիսի 27-ի և 28-ի համարներում երևում է մի առաջնորդող յօդուած «Օրվայ կենսական հարց» վերնագրով, որի հեղինակը, մի երիտասարդ հայ բժիշկ, Բագրատ Նաւասարդեան, գոռում էր, կոչ էր անում համախմբվել և կազմակերպվել։ Ես կը բերեմ մի քանի կտորներ այդ առաջնորդողից.

«Երկար խօսելը մեզ շատ հեռու կը տանի. ես կառաջարկեմ միայն այն, որ ամենաանհրաժեշտն է, որն առաջանում է Հայաստանի հայերի ներկայ թշուառ դրութիւնից։

«Ժողովվեն բանիմաց անձինք, կազմեն մի մեծ ընկերութիւն, ողորմած կայսեր հովանաւորութեան ներքոյ օգնելու թշուառ հայերին, ուր և լինեին նոքա։

«Այդ ընկերութիւնը լինի սիրտ, որից բղխելով կենսաբեր երակները կը թափանցեն ամենուրեք, ուր կայ հայի «ախ»։ Այդ ընկերութիւնը լինի հեղինակ և պատկառելի լինի ամեն մի հայի համար։ Այդ ընկերութեան այսօրվայ գործն է ուղարկել անձինք տեղեկանալու Վանայ և շրջակայից ներկայ դրութեան և այն միջոցների մասին, որոնք յարմարաւոր կը թւին անմիջապէս առաջարկելու։

«Երևի եթէ նոյն իսկ առաջին քայլը ընկերութեան կը լինի սովելոց հաց բաժանել, հիմնել Հայաստանում ամբարանոցներ—մի տարվայ պաշար, և բանալ հիւանդանոցներ, որոնց գոնէ մէկը կարելի լինի առ միշտ թողնել։ Եւ առհասարակ աչք ունենալ տաճկաց Հայաստանի վրա բաւական ժամանակ, քանի որ ազգի ճգնաժամն է, քանի որ Տաճկաստանի գործերը խառնիճաղանճ դրութեան մէջ են, քանի որ կառավարութեան տուած դրամական հարուածը կը կրցնի իր հետքերը, քանի որ օրինաց փոխարէն զէնք է քաշած հայերի գլխին, քանի որ ո՛չ տաճիկ կառավարութիւնը, այլ թափառական քիւրդերն են տիրապետում հայերին և այդ բոլորը գոնէ յանուն մարդկութեան, յանուն մարդասիրութեան։

«Շտապենք. դանդաղ գործելը եթէ ներելի է, միայն այն ժամանակ, երբ պատմութիւնը իր բնական դանդաղ քայլերովն է ընթանում, բայց այսօր, այսօր ճգնաժամ է, ամեն մի րօպէն, ամեն մի վայրկեանը անդառնալի կորուստ պէտք է բերի ազգին. խեղճ է հայոց ազգը, ձեռքից գնում է, ժամ է օգնելու։ Շտապենք, շտապենք»։

Մի քիչ յետոյ, այն է՝ նոյն տարվայ յուլիսի 18-ի համարում, նա նորից տպում է մի առաջնորդող, որից քաղում ենք հետևեալ կտորները.

«Մշակի» մայիսի 27-ի և 28-ի համարներում «Օրվայ կենսական հարց» յօդուածով ցոյց տուեցինք ազգանոցս «մի մեծ ընկերութիւն կազմելու անհրաժեշտութիւնը, ընկերութիւն, որը լինի սիրտ, որից բղխելով կենսաբեր երակները կը թափանցեն ամենուրեք, ուր կայ հայի «ախ»։ Այն օրվանից սկսեց արծարծվել այդ միտքը, մեր բարեմիտ երիտասարդները այդ հարցը դարձրին իրանց համար խօսակցութեան և հոգատարութեան առարկայ, մանաւանդ որ գաղափարը ինքն ըստ ինքեան հայ ազգի պատմական թշուառ ճգնաժամի բերմունքն է։

«Մի ազգ, որ իր վրա պատերազմական անտանելի նեղութիւնները, կոտորուածք, աւերումն և գաղթականութիւնը կրելուց յետոյ ենթարկվի այնուհետև մշտական աւարառութեանց, ջնջման և մանաւանդ սովի և տարափոխիկ հիւանդութիւնների ճիրաններին, նոյն այդ ազգը չունենայ ոչ մի ընդհանուր կապ, և ոչ մի բարեկարգեալ կազմակերպութիւն՝ որի նպատակը լինի սառը դատողութեամբ, ծանր կշռելով, կանօնաւոր կերպով գործ կատարելը, բոլոր մշտական և ժամանակաւոր ծագած թշուառութիւնների առաջն առնելը,—եթէ, ասում ենք, այդ բոլորը պակասի մի ազգի մէջ և ազգը թողվի իր հազար ու մէկ թշուառութիւններից պատճառված իներցիային,—անշուշտ նա կորստեան անդունդը կը գլորվի։

«Այդ ընկերութեան անհրաժեշտութիւնը պարզապէս զգալուց յետոյ, կը մնայ միայն մշակել մի ծրագիր, որը յարմար լինէր գաղափարի ոգուն։ Հասկացող, կրթեալ անձինք երբէք պակաս չեն մեր մէջ, ամեն տեղ, ամեն քաղաքում կը գտնվեն նոքա. հարկաւոր է մի կազմակերպութիւն ունենալ, որպէսզի այդ բոլոր անձինք գործեն մի ճանապարհով, նպատակայարմար ճանապարհով»։

Դրանից յետոյ արդէն անցնում է բաւական ժամանակ և մենք տեսնում ենք, որ ինքը Գրիգոր Արծրունին է առաջ գալիս նոյն տարվայ նոյեմբեր ամսին և իր առաջնորդողներով յորդորում կազմել մի մեծ ընկերութիւն։ Ահա այդ յօդուածները.

«Մի քանի տարի շարունակ մենք կրկնում էինք «Մշակի» մէջ, որ անհրաժեշտ է հիմնել Թիֆլիսում Բագուի մարդասիրական ընկերութեան պէս մի կենտրօնական հայոց ընկերութիւն, միայն աւելի լայն պրօգրամայով, քան թէ Բագուի ընկերութիւնը։ Եւ ահա այս տարի ուրախութեամբ լսեցինք որ մի երկու անձինք վերջապէս վճռեցին ինիցիատիվ տալ այդ տեսակ մի ընկերուամենածանր փորձանքների տարիներում ոյժ կը գտնի իր մէջ իր պատիւը և ազգային արժանաւորութիւնը պաշտպանելու համար։ Նրա մէջ կը զարթնի մեծ ազգի այն ոգին, որը չը կար և չէր կարող լինել Եապօնիայի դէմ պատերազմելու ժամանակ, և ազգային ոգևորութիւնը ոյժ կը տայ մեծ ժողովրդին միաժամանակ թէ ներքին վերանորոգութեան գործը ի կատար ածելու և թէ յետ մղելու այն թշնամու միքենայութիւնները, որը ցանկանում է շահվել պատմական յեղաշրջման հիւանդութիւնից։

«Թող այդ բաժակն անցնի մեզանից, սակայն եթէ Աստուած կը ցանկանայ այդ բանը, Ռուսաստանը հնար կը գտնի կատարելու իր պարտքը։

«Իսկ այս րօպէիս ժողովրդի ցանկութիւնը կարող է միայն մէկը լինել։ Կառավարութիւնը պէտք է ամեն ինչ անի՝ ընդհարման հնարաւորութեան առաջն առնելու համար, չը զոհելով Ռուսաստանի պատիւը և արժանաւորութիւնը, բայց նա պէտք է անյապաղ պատրաստ լինի ամեն մի հարուածի, որ կը տրվի անկինից։

«Կառավարութեան պարտաւորութիւնն է գիտակցել, որ վտանգը գոյութիւն ունի, և առաջուց ամեն միջոցներ ձեռք առնել դրա դէմ կռւելու համար, եթէ մեզ բարեկամ ձևացող թշնամիների յամառութեան շնորհիւ չի աջողվի այդ բանից խուսափել»։

—

Բաթումից հեռագրում են, որ փետրվարի 2-ին Բաթումում այրվել է բանտը մինչև վերջին թիլը. ենթադրում են, որ դիտմամբ հրդեհել են։ Ձեռք առնված միջոցների շնորհիւ կարելի եղաւ բանտարկեալների փախուստի առաջն առնել։ Մարդկային զոհեր չը կան։

—

Պետերբուրգ, 1 փետրվարի

«Голосъ Москвы» լրագիրը շատ մեծ անհանգստութեան մէջ է Անդրկովկասում իբր թէ սպասվող դէպքերի առիթով։ Լրագիրը ապացուցանում է, որ Թիւրքիային պէտք է խիստ դիմադրութիւն ցոյց տալ, եթէ նա կը յանդգնէ սպառնալ Ռուսաստանի հանգստութեանը։ Հրդեհը հարկաւոր է չէզոքացնել հէնց սկզբում։

Երևանից լրագիրը տեղեկութիւն է ստացել, որ թիւրք զինւորականները Ռուսաստանի վերաբերութեամբ իրանց ըմբոստ են պահում։(«Каспій»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

Ինչպէս անցեալ անգամ հաղորդեցինք, այդ արտակարգ ժողովը, որին մասնակցում էին մօտ 150 անդամներ և շատ հիւրեր, կայացաւ շաբաթ, երեկոյեան ժամը 7-ին, նախագահութեամբ բժշկապետ Բ. Նաւասարդեանի և քարտուղարութեամբ Ա. Աթանասեանի։

Իր գործունէութիւնը աւարտող Թիֆլիսի հայոց բարեգ. ընկ. վարչութեան նախագահ Սամսոն Յարութիւնեան, բանալով նիստը, յայտնեց, որ այդ ընկերութիւնը այժմ վերակազմվել է և վերստացել Նախկին Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան կանոնադրութիւնը։ Մի քանի խօսքերով ուրուագծելով անցեալը, ցոյց տալով կուլտուրական և խաղաղ գործունէութեան այն լայն ասպարէզը, որ բացվում է այժմ ընկերութեան առաջ, նա կոչ արեց համախմբվել և գործել։ Ապա նա յայտնեց և այն ուրախալի լուրը, որ ընկերութեան հին գործողներից մինը, 18 տարի խորհրդի նախագահի պաշտօն վարող պ. Ալեքսանդր Ս. Անանեան, որն, իբրև ընկերութեան պատւաւոր անդամ, հրաւիրված էր, նամակով ցաւ յայտնելով, որ հիւանդութեան պատճառով անկարող է ներկայ լինել, կամենալով նպաստել վերակազմված ընկերութեան, նուիրում է 30,000 րուբլի, որից 20,000 ր. այժմ, իսկ 10,000 ր. իր մահից յետոյ ստանալիք, այն պայմանով, որ այդ գումարը պահվի անձեռնմխելի, իսկ տոկոսիքը գործադրվի գիւղական դպրոցների բացման համար։

Ժողովը մեծ ոգևորութեամբ և բուռն ծափահարութիւններով ընդունեց այս յայտարարութիւնը և որոշեց շնորհակալութիւն յայտնել նուիրատուին իր այդ առատ նուէրի համար։

«Մշակ»ի խմբագիր պ. Ալէք. Քալանթար յանուն խմբագրութեան ողջունեց ընկերութեան նոր գործունէութեան շրջանը հետևեալ խօսքերով.

«Այսօր, հայոց բարեգործական ընկերութեան սկզբնաւորութեան օրը, պատիւ ունեմ յայտնել յարգելի ժողովին «Մշակ» լրագրի խմբագրութեան շնորհաւորական ողջոյնը։

«Մենք ողջունում ենք այդ սկզբնաւորութիւնը, որ պէտք է տայ օգտաւէտ հիմնարկութիւնների մի ամբողջ ցանց մեր ազգաբնակութեանը։

«Մենք միշտ մի առանձին նշանակութիւն ենք տուել հասարակական հիմնարկութիւնների գոյութեանը և լաւ գիտենք, որ նրանց վերապահված է խոշոր դեր ժողովրդի զարգացման գործում։ Մենք շատ քիչ հիմնարկութիւններ ունենք, իսկ եղածներն էլ մինչև այժմ շատ սահմանափակ ասպարէզ են ունեցել գործունէութեան համար։ Մասնաւոր մարդկանց և մասնաւոր խմբերի գործերը միշտ կրում են ժամանակաւոր և պատահական բնաւորութիւն, իսկ հիմնարկութիւնները տալիս են ամրութիւն գործին, պահպանում են յաջորդականութիւն հին ու նոր գործողների միջև, մտցնում են սիստեմ և իբրև յարատև օրգաններ գրաւում են նիւթական միջոցներ այս ու այն նպատակը իրագործելու համար։

«Հայոց բարեգործական ընկերութիւնը այժմ բացի նեղ բարեգործական օժանդակութիւններ տալուց մտցրել է իր ծրագրի մէջ նաև մի շարք նոր նպատակներ, որոնք հնարաւորութիւն են տալիս ընկերութեանը հոգալ ժողովրդի կրթական և կուլտուրական կարիքները։

«Ողջունում ենք հայոց բարեգ. ընկերութեան նոր գործունէութեան սկզբնաւորութիւնը, ցանկանալով որ ընկերութեանը աջողվի իր բազմաթիւ ճիւղաւորութիւններով և կուլտուրական գործողների աջակցութեամբ իրագործել իր ծրագիրը մեր ժողովրդի օգտին»։

Դրանից յետոյ վարչութեան անդամ պ. Հ. Առաքելեան կարդաց մի մանրամասն զեկուցում, իբրև պատմական տեսութիւն Կովկասի հայոց բարեգործ. ընկ. 27-ամեայ գոյութեան։ Այդ զեկուցումը առանձին տպում ենք «Մշակում» այսօրվայ համարից սկսած։

Վարչութեան գանձապահ պ. Առաքել Սարուխանեան ներկայացրեց մի համառօտ հաշիւ այն գումարների և կարողութեան, որ նախկին ընկերութիւնը այժմ պէտք է յանձնէ նոր ընկերութեան։ Այդ հաշւից երևաց, որ յանձնվելու է ընդամենը կարողութեան թէ արժէթղթերով, թէ դրամով, թէ անշարժ կալուածներով—236,800 րուբլի, այն է՝ 1) Թիւրքահայ գաղթականների նպաստի գումար—2843 ր. 98 կ., 2) ընկերութեան անձեռնմխելի գումար—43,500 ր., 3) 1907 թ. ստացված Բուդաղեանից յատուկ գումար—10,000 րուբլի, 4) Նախկին Արմաւիրի ճիւղի գումար—9600 րուբլի, 5) Երևանի ճիւղի գումար—2800 ր., 6) Նոր-Բայազէտի ճիւղի գումար—240 ր. և 7) Ծուղադեանի կտակած կարողութիւն (անշարժ կալուածք և դրամագլուխ)—167,817 րուբլի, ընդամենը 236,800 րուբլի։

Ապա վարչութիւնը յայտնեց, որ ինքը ամբողջովին հրաժարական է տալիս և խնդրում է ընտրել նոր խորհուրդ, նոր վերստուգող յանձնաժողով։ Պէտք է ընտրել խորհրդի 12 անդամ, 6 փոխ-անդամ և վերստուգող յանձնաժողովի 3 անդամ և 2 փոխ-անդամ։

Առաջարկված բազմաթիւ անձերից մի քանիսը, չը նայած ժողովի ստիպողական խնդրանաց, հրաժարվեցին քուէարկվելուց, որոնց թւում ընկերութեան պատւաւոր անդամ պ. Ալէքսանդր Մէլիք-Ազարեանց, պ. պ. Ալէքսանդր Քալանթար, Հ. Առաքելեան և Լ. Ղուլեան, որոնք յայտնեցին, թէ հակառակ իրանց ջերմ ցանկութեան գործելու նոր ընկերութեան մէջ, ինչպէս գործել են անցեալում, երկար տարիների ընթացքում, նրանք անկարող են այժմ որևէ պաշտօն ստանձնել ունեցած սաստիկ զբաղմունքների պատճառով և խնդրում են ժողովից ներել։

Գաղտնի քուէարկութեամբ ընտրվեցին խորհրդի անդամներ—1) Սամսոն Յարութիւնեան, 2) Սամուէլ Բալաղեան, 3) Առաքել Սարուխանեան, 4) Յովհաննէս Սպէնդիարեան, 5) Խաչատուր Աֆրիկեան, 6) Սմբատ Խաչատրեան, 7) Յակոբ Քոչարեան, 8) Յովսէփ Ամիրխանեան, 9) տիկին Հեղինէ Աստուածեան, 10) Յակ. Շահնազարեան, 11) Ս. Լիսիցեան, 12) Ալեքսանդր Պօպովեան և փոխ-անդամներ—1) Ստեփան Մալխասեան, 2) Արշալոյս Մխիթարեան, 3) Սարգիս Մելքումեան և 4) Գէորգ Խատիսեան։ Վերստուգող յանձնաժողովի անդամներ ընտրվեցին 1) Ռ. Յովհաննիսեան, 2) Բ. Բարսամեան, 3) Յ. Մէլիք-Բախտամեան, 4) Փիլօյեան և 5) Ս. Շահվերդեան. սակայն մի թիւրիմացութեան պատճառով որոշվեց վերստուգող յանձնաժողովի անդամների ընտրութիւնը նորից կատարել։

թեան հիմնադրութեան։ Բայց վերջն ինչ եղաւ... Երկու-երեք անգամ հաւաքվեցին, մշակեցին մի լայն, ընդարձակ ծրագիր, վճռեցին ներկայացնել կառավարութեան հաստատութեանը, բայց ոչինչ չարեցին և ծրագիրը պարոններից մինի տանը, ահա արդէն վեց ամիս է որ, խոր քնով քնած է...

«Արդեօք կը զարթնի նա իր խոր քնից, չը գիտենք։ Գիտենք միայն թէ մեզ համար այդ տեսակ ընկերութիւն անհրաժեշտ է և թէ Թիֆլիսի համար ամօթ է չունենալ մի ընկերութիւն, որ ունի մինչև անգամ Բագուի պէս մի գաւառական քաղաք»։

«Կ. Պօլսի երեք ընկերութիւնների միանալը մեզ՝ ռուսաստանցի հայերիս վրա պարտք է դնում աւելի էլ եռանդով օգնել Թիւրքիայի հայերի կրթութեան գործին։ Չը պէտք է մոռանանք, որ Թիւրքահայաստանի մէջ լուսաւորութիւնը տարածելու գործը ապագայի համար մեծ նշանակութիւն պէտք է ունենայ։ Միացեալ ընկերութիւնը բացի Հայաստանի բուն հայ ազգաբնակութեան մէջ ուսում տարածելուց՝ պէտք է փոքր առ փոքր ջանայ տարածելու լուսաւորութիւնը և Թիւրքահայաստանի վայրենի ցեղերի մէջ, որոնք բնակվելով հայերի հետ միասին՝ մինչև այժմ չեն ենթարկվել որևէ կրթողական ներգործութեան, դարերի ընթացքում մնացին վայրենի, բարբարոս և մինչև այժմ շարունակում են նեղացնել հայերին։

«Վերջապէս հայերը պէտք է մտածեն իրանց թշնամիներից իրանց համար բարեկամներ պատրաստել, և այդ նրանք կարող են անել միմիայն նրանց մէջ լուսաւորութիւնը տարածելով։

«Որպէսզի մենք մեր կողմից դրական կերպով օգնենք Միացեալ ընկերութեան գոյութեանը, հարկաւոր է նուիրատւութեան գործը հիմնել ոչ թէ պատահական, ժամանակաւոր հիմունքների վրա, այլ հաստատ, տևողական սկզբունքների վրա։

«Մենք առաջարկում ենք, որ յօգուտ Միացեալ ընկերութեան նուիրատւութիւն անել ցանկացողները, փոխանակ միանուագ գումարներ տալու, աւելի քիչ տան, բայց պարտաւորվեն մշտապէս տալ, տարեկան յայտնի վճարը մտցնելով յօգուտ յիշեալ ընկերութեան։ Մենք մեր կողմից ուրախութեամբ կընդունենք այդ տարեկան անդամական վճարները և կը հասցնենք Միացեալ ընկերութեանը։

«Ինչ որ Կ. Պօլսի մէջ հիմնված ընկերութիւնը անում է Թիւրքահայաստանում, նոյն աշխատանքը Անդրկովկասում կարող էր յանձն առնել Բագուի մարդասիրական ընկերութիւնը կամ այն ընկերութիւնը, որ պէտք է հիմնվի Թիֆլիսում։

«Ժամանակ է արդէն մեր ինտելիգենցիային ծանր, լուրջ կերպով վերաբերվել դէպի հայերի կրթութեան գործը։

«Մենք չենք քարոզում հայերին, ինչպէս այդ անում են ուրիշները, թողնել անձնական հաշիւները, թողնել կրքերը, որովհետև այդ տեսակ քարոզները ապարդիւն ենք համարում։ Նոյնիսկ այդ քարոզներ անողները ամենից շատ ենթարկված են նախանձի և չար կրքերի ազդեցութեանը։ Մեր միտքն այն է միայն որ ներկայ սերունդը աւելի բարոյական դարձնելը անհնարին է. այդ պէտք է հասկանանք և աշխատենք ուսում և լուսաւորութիւն տարածել, համոզված լինելով որ մենք թէև անպիտան ենք, բայց ապագայ սերունդը մեզանից լաւ կը լինի։ Այո, համոզված լինելով որ մենք ինքներս մեծ պակասութիւններ ունենք, մենք պէտք է ամեն ճիգ թափենք, որ ապագայ սերունդը մեզանից բաղդաւոր լինի»։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Շաբաթ, փետրվարի 2-ին, կայացաւ կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան վաղուց սպասված ընդհանուր ժողովը։

Նախագահը, բանալով ժողովը, յայտնեց, որ պարապմունքների առարկաներն են ընկերութեան տեղեկագրի ընթերցումը և պաշտօնատար անձերի ընտրութիւնը։

Տեղեկագրի մէջ առաջ էին բերված տեղեկութիւններ ընկերութեան վերջին տարիների գործունէութեան մասին։

Ընտրութիւնները տուին հետևեալ արդիւնքը. նախագահ ընտրվեց իշխան Գրուզինսկիյ, փոխ-նախագահ Ք. Վերմիշեան, խորհրդի անդամներ՝ Սօկօլօվ, Տիմօֆէև, Փիրալեան, Րցխելաձէ և Սահակեան։

Քարտուղարի ընտրութիւնը յետաձգվեց։

Ընտրութիւնները վերջանալուց յետոյ Ա. Քալանթար ընկերութեան անդամների կողմից շնորհաւորեց ընկերութեան խորհրդի վերակազմութիւնը և ցանկութիւն յայտնեց, որ ընկերութիւնը կարողանայ վերականգնել իր հեղինակութիւնը։

Վերմիշեան ասաց, որ նա իր կողմից կաշխատէ ոյժը ներածին չափ աշխատել ընկերութեան գործունէութեան զարգացման համար։

ՄԻՔԱՅԷԼ ԹԱՄԱՄՇԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Կիրակի, ամսիս 3-ին, ինչպէս որ յայտարարված էր, տեղի ունեցաւ հանգուցեալ Միքայէլ Թամամշեանի թաղումը։ Չը նայելով սաստիկ քամուն ու խիստ ցուրտ եղանակին, բաւականին մեծ բազմութիւն էր եկել յուղարկաւորութեանը մասնակցելու։ Դիակը հանգուցեալի ապրած բնակարանից դուրս բերվեց առաւօտեան ժամը 10-ին, և բաւականին երկար տեղ տանում էին ուսերի վրա։ Իսկ դիակառքի շուրջը կախված էին պսակները. երկու արծաթեայ, մէկ մետաղեայ և մի քանի հատ հարաւային բոյսերից ու թարմ ծաղիկներից։ Պսակներից մէկը քաղաքի կողմից էր դրված, միւսը առևտրական բանկի, երրորդը կովկասագիտական կուրսերի, իսկ միւսները՝ զաւակների, եղբայրների, քոյրերի և ազգականների կողմից։

Նիկօլայևսկայա կամուրջի մօտ դիակը դրվեց դիակառքի վրա ու այդպէս թափորը առաջ անցաւ Բարեատինսկայա փողոցով մինչև եղբ. Թամամշեանների քարվանսարան, ուր դիակը նորից վայր առնվեց դիակառքի վրայից, մաղթանք կատարվեց և դարձեալ դիակը ուսերի վրա տարվեց մինչև Նորաշէնի ս. Աստուածածնի եկեղեցին։

Այդտեղ հանգուցեալին համակրողների ու յարգողների բազմութիւնը աւելի ևս մեծացաւ։

Պատարագի կիսին, «Հայր-մերից» յետոյ պատարագիչ քահանան մի կարճառօտ քարոզ ասաց, դրւատելով հանգուցեալին իբրև մի շատ օգտակար և աշխատասէր հասարակական գործիչ։ Ապա քահանան, դառնալով հասարակութեանը, յորդոր կարդաց, որ, փոխանակ մեծածախս պսակներ դնելու հանգուցեալների դագաղի վրա, ծախսվելիք գումարները նոյն հանգուցեալների յիշատակին նուիրեն այս և այն բարեգործական, կրթական ու կուլտուրական հաստատութիւններին, որով ծախսված գումարները շատ աւելի արդիւնաւոր գործի ծառայած կը լինեն, քան պսակների համար արված դէպքում։ Միևնոյն ժամանակ տէր հայրը յայտնեց, որ հանգուցեալի յիշատակին մի քանի հարիւր րուբլի է նուիրված ուսումնարանների օգտին։

Պատարագից յետոյ, եկեղեցու բակում դամբանական ճառեր արտասանեցին իշխան Գէորգի Թումանովը և քաղաքագլուխ իշխան Չերքեզովը։

Առաջինը խօսեց կովկասագիտական կուրսերի կողմից, որոնց հիմնադիրն էր հանգուցեալը, իսկ երկրորդը խօսեց քաղաքային դումայի կողմից, որի մէջ հանգուցեալը, իբրև ձայնաւոր, աշխատել էր մինչև երկար տարիներ։

Երկու ճառախօսներն էլ դրւատեցին հանգուցեալ Միքայէլ Թամամշեանի ճիշտ այն յատկութիւններն ու բնաւորութեան գծերը, որոնց մասին մենք արդէն մատնանշել էինք «Մշակի» կիրակնօրեայ №-ում։

«Հանգուցեալ Միխայիլ Իվանովիչը,—ասացի միջի այլոց իշխան Չերքեզովը,—ինչպէս որ խստապահանջ էր դէպի իր անձը, այնպէս էլ խստապահանջ էր դէպի ուրիշները, և նա կծու քննադատութեան էր ենթարկում թէ իր և թէ ուրիշների գործերը։ Սակայն, որչափ էլ կծու և խիստ լինէին նրա քննադատութիւնները, այնուամենայնիւ նրան լաւ ճանաչողներից ոչ ոք չէր նեղանում ու չէր վիրաւորվում նրանից, որովհետև բոլորն էլ գիտէին ու համոզված էին, որ Միխայիլ Իվանովիչը վերին աստիճանի անկեղծ էր և միշտ ղեկավարվում էր հասարակութեան շահերով ու միմիայն կատարվող գործի աջողութիւնով»։

Հանգուցեալի մարմինը հողին յանձնեցին նոյն ս. Աստուածածնի եկեղեցու բակում, իր հանգուցեալ կնոջ գերեզմանի կողքին։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Երևան, 31 յունվարի

Ամսիս 16-ին Հին-Նախիջևանում Երևանի նահանգական դատարանի սեսսիան քննում էր Նախիջևանի հայ-թիւրքական ընդհարումների գործը, որոնք տեղի էին ունեցել մայիսի 12-ին 1905 թւին։ Նիստին նախագահում էր պ. Եակուբենկօն՝ մասնակցութեամբ դատարանի անդամներ պ. պ. Նազիրաձէի և Վիգանովսկու։

Մեղադրում էր դատախազի օգնական պ. Իզգէպսկին, պաշտպանում էին երդուեալ հաւատարմատարի օգնական պ. Լևոն Մուշեղեանցը և նախիջևանցի պ. Էյնալի-բէկ Սուլթանովը։ Մեղադրվում էին 25 հոգի, որոնցից 21-ը թուրք էին, իսկ 4-ը հայ։

Գործից առաջ թուրքերը առաջարկել էին հայերին հաշտվելու. հայերը այդ առիթով խորհրդակցելուց յետոյ յայտնել էին իրանց համաձայնութիւնը հաշտութեան, հետևեալ բանաձևով. «Ի նկատի ունենալով մեր կուլտուրական պահանջները, ցանկանալով ապագայում այդ հողի վրա համերաշխ գործունէութիւն, մենք ներում ենք մեզ հասցրած չարիքները և մոռացութեան ենք տալիս տխուր անցեալը»։ Դատավարութեան ժամանակ հետաքրքրական էին այն պատասխանները, որոնք լսվում էին վկաներից կամ մեղադրեալներից։ Օրինակ՝ վկայ Պետրոս Իսախանեանը ասում էր, «որ այս ընդհարումների բոլոր պատասխանատւութիւնը ընկնում է տեղական նախկին գաւառապետի և փոխ-նահանգապետի վրա, որոնք միջոցներ ձեռք չառան թէ ընդհարումների առաջը առնելու և թէ նրան շուտափոյթ վերջ տալու»։ Վկայ Ջաֆար-Կուլի խան Նախիջևանսկին ամբողջ մեղադրանքը բարդում էր նախկին գաւառապետ Էնկելի վրա, որը, նրա ասելով, նոյնիսկ հայերից կողոպտված ապրանքը բարձրացրել էր և դրել կողոպտողի մէջքին։ Մէկ թուրք վկայ ասաց, որ իրանց սովորեցնում էին սուտ վկայութիւն տալ և յարաբերութիւնները հայերի հետ լարում էր մի կողմնակի մարդ, և որ այդ կողմնակի մարդը, ոչ հայ էր և ոչ թուրք, որը եկաւ ու գնաց։

Մեղադրեալ Ստեփան Պօղոսեանը ապացուցում էր, որ կոտորածից յետոյ, իր տան մէջ, նախկին փոխ-նահանգապետ Տարանովսկին հանգստացնում էր հայերին ասելով. «Ի՞նչ էք այդքան վրդովվում. ինչ է եղել. մի փոքր արիւն են թողել ձեզանից»։

Պաշտպան պ. Լևոն Մուշեղեանցը իր պերճ ճառի մէջ ապացուցեց, որ այն արիւնալի դրաման, որ երկու ողբալի տարիների ընթացքում կատարվեց Անդրկովկասում երկու դարևոր հարևանների միջև, տեղի ունեցաւ գլխաւորապէս այն պատճառով, որ սև ռէակցիան իշխում էր Ռուսաստանի ամեն տեղում՝ աշխատելով սաղմում խեղդել ամեն մի ապստամբական միտք կամ շարժում։ «Ամենազօր պրօվօկացիան իր դերը լիովին կատարեց և մեզանում։ Մենք տեսանք այստեղ, դատարանում, ի դիմաց գաւառի բարձր պաշտօնեաների—փոխ-նահանգապետ Տարանովսկուն և գաւառապետ Էնկէլին, այս մեղադրական աթոռների վրա պէտք է նստած լինէին և պատասխանատու մեր առաջ ոչ թէ այսօրվայ մեղադրեալները, այլ Տարանովսկին և Էնկէլը»։

Պաշտպան Էյնալի-բէկ Սուլթանովը խօսեց այն հանգամանքի մասին, որ արդէն երկու կողմն էլ զղջալով և ցաւելով այն բոլոր զոհերի համար, որ ունեցել են, այժմ բարեկամական ձեռք են մեկնել մէկը միւսին, անկեղծօրէն հաշտվել են և այսօր սպասում են դատարանի արդարացմանը։ Այդ արդարացումը աւելի ևս սերտ կապով կը կապի դրանց և կունենայ ընդհանրապէս իր բարերար ազդեցութիւնը։

Դատարանը արդարացրեց բոլոր մեղադրեալներին։

Դատարանի այս վճիռը ուրախութեամբ ընդունվեց հասարակութեան կողմից, որի գիտակից մասը նոյնիսկ որոշ զոհաբերութեամբ ձեռք բերած հաշտութիւնը և խաղաղութիւնը երկու դարևոր հարևանների միջև շատ թանգ է գնահատում՝ ի նկատի ունենալով ապագայ համերաշխ կեանքը և աշխատանքը։

Գործը վերջանալուց յետոյ, միւս օրը պ. Մուշեղեանցը և պ. Էյնալի-բէկը Ջուլֆայից ստացան հետևեալ հեռագիրը. «Յայտնում ենք մեր շնորհակալութիւնը ձեր համբերատար և մեծահոգի աջակցման համար, որ կարողացաք Նախիջևանի ընդհարումների գործը բարեյաջող կերպով վերջացնել»։ Ստորագրութիւններ՝ Նաջաֆօվներ, Ռահիմօվ, Իւսիֆօվ, Զարգարեան, Ռահիմօվ և Շէյխօվ։

Այս հեռագրին պատասխանված է հետևեալ հեռագրով. «Բոլորի կողմից կատարված է սրբազան պարտականութիւն ընդհանուր հայրենիքի առաջ։ Ամբողջ ողբերգական անցեալը մոռացութեան է տրված յանուն կուլտուրական պահանջների, համաձայնութեան և համերաշխ աշխատանքի՝ յօգուտ երկու դարևոր հարևանների։ Ներկան ամենաճշմարիտ գրաւականն է լաւագոյն ապագայի, յաղթութիւնն է ինքնագիտակցութեան և անէծք ընդ միշտ յաղթված չէյթանին։ Մուշեղեանց»։

Գ. Աղազադեան

ԶԳԱՑՄՈՒՆՔԸ ՊՍԱԿԵՑԷՔ ԳՈՐԾՈՎ

Մի թախծաբեր քսանհինգամեակ.—Նրա յայգահանդէսը.—«Աղբիւր» ամսագրի յունվարի 25-ի առաջին համարը.—Կոչ։

Աչքիս տակ ունեմ «Աղբիւրի» քսանհինգամեակի այս 1908 թւի յունվարի 25-ի № 1-ը, իսկ աչքիս մէջ խորին յուզմունքի շիթը *)։

Միևնոյն նշանակն **) է մուտքի վրա։ Լայն երկփեղկված պլուտոնական երկու ժայռերի պատառուածքից ներս, հանդէպդ, լեռը կոնաձև աւարտով. ձախումդ, ժայռահարթի վրա, լեռնականների տնակներ՝ իբր արծուային ապարանքներ, և սրանց վրա աւելի բարձրից հովանի ծառախումբը. խորքում անդունդը, ուր, գահավէժ, լիզելով ժայռն, իջնում է լեռնային վտակը, անցնում է ժայռերի մուտքի վրա դրսից կապված կամուրջի տակով, սփռվում է ցան և ցիր և ապա... երևակայութեանդ թող՝ հետևել նրան իր թաւալգլոր ընթացքում։

Այդ է «Աղբիւրի» խորհրդաւոր նշանակը. և այդ էր քսանհինգ ձիգ տարիներ—եթէ երբեմն զուարթութեան՝ բայց աւելի շատ չարքաշութեան տարիներ—նրա ճակատագիրը։

Վտակը ծնվում է ժայռի կողքից, աղբիւրանում է, զարահոս իջնում, անդնդում փրփրում, ապա ծայր առնում, ծիծաղ ծաւալ ժպիտով, արծաթ-արծաթ կոհակներով քարից քար, քարից քար ոստոստելով, կարկաչելով, ցայտելով, միշտ առաջ, մի՜շտ առաջ. և երթալով-լցվելով քոյր վտակների գրկախառնումից՝ նա գետանում է և շառաչմունքով թաւալվում։

Իսկ այնուհետև՞։

Իսկ այնուհետև... Լսեցէք։

«Երբեմն լեռնային գագաթից պոկվում է, ցած է գլորվում մի ահագին քարաժայռ։ Նա կտրում է գետի ճանապարհը։ Ջրերի ընթացքը կանգ է առնում։ Այդ միջոցին կատաղած Թարթարը ուռչում է, ուռչում է և, հետզհետէ աճելով, հաւաքում է իր ոյժերը։ Մի զարկ, զարկ ևս... և ահա ահագին քարաժայռը, որ կտրել էր նրա հոսանքի առաջը, յետ մղվեց, կատաղի ալիքները մի թեթև տաշեղի նման տանում են նրան, տանում են և, զարկելով ափերի ապառաժներին, խորտակում են, փշրում են։ Գետը դարձեալ ընդունում է իր բնական հոսանքը» ***)։

Հասկանո՞ւմ էք այժմ «Աղբիւրի» նշանակութիւնը, նրա խորհուրդը։ Վտակը նախ, և ապա գետ Թարթարը։

Մի ամբողջ ընթացք՝ օրօրոցից դէպի հրաբուխ կեանքը։ Դուք կը կարդաք վտակի և Թարթարի պատկերների վրա կեանքի մանկութիւնը և խրոխտ հասակը։

---

*) Յունվարի 25-ին բոլորվեց «Աղբիւրի» 25-ամեակը. մի յայգահանդէսով նշանաւորվեց այդ օրը մի քանի տասնեակ հրաւիրեալների շրջանում։

**) «Աղբիւրի» կողի վրա՝ նրա ցուցանակ պատկերն է։

***) Րաֆֆի, «Աղբիւր», № 1, 1908

Քսանհինգ տարի այդ ճանապարհի վրա ձգնեց Տիգրան Նազարեանի «Աղբիւրը». իսկ այսօ՞ր:

Կողի առաջին երեսի վրա, ձախից, կարդում եմ համարի բովանդակութիւնը: Կոչվում են անուն-անուն մի շարք հանգուցեալ աշխատակիցներ, որոնց պատկերները պիտի տեսնէք համարի ներսի էջերում: Ապա բովանդակութեան նիւթերի վերնագրերը՝ խաչանշված հեղինակների անուններով: Միայն մեռելներն են խօսում. ոչ մի կենդանի շունչ: Ո՛, տխո՛ւր զգացմունք, բայց և գո՛ղտր վերյիշողութիւն: Նրանք զարթի անուշանուագ և խորազդիչ մեղեդին հնչեցողներ են, այստեղ մեղմ, այնտեղ խրոխտաձայն: Նրանք այժմ խորո՛ւնկ քընած են գերեզմանների քունը:

Աջից՝ կարդում եմ. գեղարուեստի դահլիճում, ցայգահանդէս. յիշատա՛կ անցածներին, պատիւ դեռ շնչող աշխատակիցներին, որոնք սահած քսանհինգ տարիներում վաստակել են «Աղբիւրի» շուրջը: «Ցաւե՛րժ յիշատակ եւ յարգանք մեր աշխատակիցներին» —լսվում է նորից խմբագրի ձայնը երկրորդ երեսի վրա, և հետեւում է արձանագրական շղթան բոլոր վաստակաւոր անունների, լցնելով լուրթ[1] մեծաթերթի երեսը երկիջեան սիւնակներով:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Եւ ցայգահանդէսի ծրագիրը բացվում է քահանայի «Հոգւոց»-ովը, որին յաջորդում է Եկմալեանի «Հայր մեր»-ի եղանակումը. և ապա տողանով հետզհետէ լցվում է դահլիճը արտասանութեամբ և գործիական ու ձայնական երաժշտութեամբ փոխ առ փոխ: Ներդաշնակութեան ալիքների միջով, ուր եղանակումն, նուագ և զգացումն հիւսված են միասին, ցայգահանդէսը երկարվում է դէպի կէս գիշեր: Հուսկ լռում են լարերը, իսկ սրտերը լի են իրանց գեղլու քսանհինգ տարիների վաստակաւորի և գեղարուեստին պաշտամունք մատուցողի առաջ, երբ երախտագէտ շնորհակալութիւն նրա այնքան և այնքան տքնութեանը: «Նազարեա՜ն, Նազարեա՜ն»—կանչում են հանդիսականները:

Ո՛, դուք յարգեցիք յիշատակն անցեալ վաստակաւորների և ցուցիք պատիւ միւսներին, որոնք դեռ շնչում են օդը. իմ ցայգահանդէսը այդտեղ է առնում վերջ: Ոչ ձերը ինձ, այլ իմ շնորհակալիքը ձեզ: Ոչինչ աւելի: Ոչինչ աւելի:

Եւ Տիգրան Նազարեան անյաղթելի կերպով յամառում է պնդել՝—ոչինչ աւելի: Նա մերժում է մտնել այդ բոլէին հանդիսասրահը:

Շրջում եմ թերթ թերթի ետեւից ամսագիրը. անցեա՜լ հոգիներ, մարա՜ծ ճրագներ. ահա ետեւ ետեւ անցնում են աչքիս տակով Մուշեղ Մամիկոնեան. Սօլովիեվ Նեսմէլով՝ պաւուական ռուսը, որ մանկութեան վրա էր դրել յոյսը ապագայ լաւ մարդն ունենալու համար. նկարիչ Ստ. Ներսէսեան. Նատալիա Տէր-Մարկոսեան. Մակար Եկմալեան. ահա Քրիստափոր Միքայէլեան՝ նուիրական զգացմունքի հերոս մարդը. ո՛հ, սա Րաֆֆին է, Րաֆֆի՛ն. տե՛ղ տուէք, ոգինե՛ր. Պերճ Պռօշ, աւա՜ղ. սա իր յօդուածով ներս է բերում իր հետ «Աղբիւրի» մէջ Խաչատուր Աբովեանի անմեռանելի դէմքը. Սիմէօն Հախումեան. իսկ դու, աւա՜ղ, դէպի վայր հակված մի հարուստ սաղարթի պատկերով ես յիշատակվում, գողտրիկ Քրիստափոր Թադէոսեան, վաղ խորտակված մակոյկ. Գաբրիէլ Միրզոյեան՝ գաղափարի կուռ մարդը, մանկական հոգու կազմակերպութիւնից դնելով իր գործը: Անմահն Պետրոս Ադամեան. բեմից հայի և մանաւանդ հայ բարձրայօն տիկնոջ սիրտը դէպի ազգութիւն շուռ տուողը. սա—այրական հասակը իր արուեստի կախարդիչ գաւազանով նուաճողը—իր խօսքի մեղրովը «Աղբիւրի» մանուկներին Զատկի կարմիր ձուոմն է գրաւում, և ինչպէս. նա ուզում է սուրբ կարմիր արիւնի շնորհը ցօղած տեսնել նրանց վրա և վարդի կարմրութիւնը նկարված նրանց դէմքին: Ողբալի՛ Շահլամեան, ահաւասիկ և դու. դու դեռ 91 թւին «Աղբիւրի» գանգատն էիր երգում մարգարէութեամբ, և նրա գալիք լացը լալիս, արտասուքդ իտալական մի վտակից բերելով.—

«Ես մէկ թելի չափ ջուր էի և մաքուր
բարակ կոհակով
Ժայռերից իջնում էի:
Ես հանդարտ և ուղիղ առանց խանգարելու ոչ ոքի
Անվրդով հոսում էի:
Բայց մէկ անգամ հրապուրիչ ջրովս վայրկենաբար
Օտարի ուշքը գրաւեցի:
Քնքշաբար գրկեց նա և խոնարհվելով
դէպի ինձ՝
Ես շրթունքները թրջեցի:
Բայց յետոյ... բաժանվեցանք. նա մնաց
լեռների ետեւում,
Իսկ ես լալիս եմ անդադրում»[2];

Նա մնաց լեռների ետեւո՛ւմ...

Այդպէս անցան ուրուականներն աչքիս տակով. մի քանիսը լուռ, միւսներն իրանց քնարից մի լար թրթռեցնելով, կամ յուշատետրից մի էջ բանալով:

Շրջում եմ համարը իր բոլորովին վերջին երեսի վրա՝

«Քսանհինգամեակ հիասթափման»—արձանագրել է այստեղ խմբագիրը. և նա իր ամբողջ գրադարանն ու պատկերները տալիս է նրան՝ ով կը լուծէ «Աղբիւրի» այդ հանելուկը:

Սրտի մորմոքը, կսկիծը—իր՝ արդէն ըստուերների շարքն անցնելու դռնում կանգնած գործի հանդէպ, ա՛յնքան երկար տարիներ, մի ամբողջ քառորդ դար, գրկած ու փայփայած, իբրև աչքի բիբը պահպանած՝ սիրած գործի հանդէպ—սրտի մորմոքը, կսկիծը, ասում եմ, խռովեցրել մռայլ են դարձրել խմբագրին: Նա այժմ, իբրև վհուկ, կոչում է ցուրտը փչող մրրիկ քամին պաղանձաւներից: Ահա երկու մատաղատի քոյրեր, ընկած սառցակոյծ հողմի բերանը. երկուսն էլ բոկոտն: Պուրակի մէջ՝ աղբիւրի վրա կամ վտակի ափին են եղել նրանք խաղ ու խնծիղ անելու և չորուկ ժողովելու: Եւ ահա այդտեղ եղանակի յանկարծական փոփոխութիւնը մրրկի բերանն է տըւել նրանց: Անդրանիկը մի գիրկ ցախ կռնատակն առած և աջովը իր փոքրիկի ձեռքից բռնած, երկուսն էլ երեսներն իրանց կուրծքին և ճակատները լլկող քամուն տուած՝ գնում են հողմակոծ:

Սառնամանիք եւ իր *) սիրելիները—այդպէս է նշանակագրել այդ պատկերը «Աղբիւրի» խմբագիրը, անշուշտ սրտի մուխն աչքերում ու մրմուռն ռունգներում:

Սրտայո՛յզ այլաբանութիւն:

Այդ է վերջին պատկերն և այդ էլ վերջին խօսքը: Եւ այդպիսի վախճանով բոլորած է «Աղբիւրը» իր քսանհինգամեակը:

Ինքդ ես հանել հանելուկը, ո՛վ տխրամած խմբագիր: Քեզ ուրեմն՝ և՛ գրքերդ և՛ պատկերներդ: Եւ իմ՝ որ քար չի մնալ մարդու սիրտը՝ երբ բանաստեղծը իր աւիւնով կը հալի նրան. նա կը յուզվի, բարեկամ, նա կը յուզվի:

Ո՛վ դուք, որ ամեն-հանդիսադրութեան ժամանակ յորդ զգացմունքով հիւսում էք ձեր մաղթանքը տօնախմբվող գործի շուրջը, ձեր մտքի առաջ պահեցէք յունվարի 25-ի խորհրդաւոր ցայգահանդէսը —օրհներգ արդէն յաւերժութեան գիրկն անցած ոգիներին և պատւադրութիւն նրանց, որոնք դեռ շունչ ունեն և մի նոր արիական մղումով կարող են «Աղբիւրի» վերստին կարկաչը լսելի անել տալ մանկութեան յուսաժպիտ մարգաստանի մէջ—և արձակեցէք, իւրաքանչիւրդ իր տեղում, ձեր յորդորական ձայնը քաղաքներին և գիւղերին՝ օժանդակ կանգնել «Աղբիւրի» վերահոսմանը:

«Ես շրթունքները թրջեցի:
«Բայց յետոյ... բաժանվեցանք. նա մնաց լեռների ետեւում,
«Իսկ ես լալիս եմ անդադրում»:

Տխո՜ւր է այդ վարագոյրը, շատ տխուր: Յե՛տ քաշեցէք, յե՛տ քաշեցէք, ո՛վ արիական հոգինե՛ր:

Ա. Մ. Եղեկեան

---

[1] Կանաչ գոյն, կապտին տալով:

[2] «Աղբիւր» № 1, 1908 թ. յունվարի 25.

*) Իր, իմանալ Աղբիւրը, կամ խմբագիրն Աղբիւրի դէմքի տակ:

ԱՐՓԻԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Արփիարեանի՝ իբրև հայ մտքի նշանաւոր ազդակի և հայ ստեղծագործողի սպանութիւնը, անշուշտ, զզուանք, նողկանք և խորին զայրոյթ պէտք է առաջ բերէ բովանդակ հայութեան մէջ, գէթ նրա այն մեծամասնութեան մէջ, որ տոգորված չէ վայրենի ձգտումներով և հայեացքով, թէ ազգային տաղանդ, հանճար ոչ մի նշանակութիւն չունի, եթէ այդ տաղանդը, հանճարը չէ ծառայում որոշ խմբերի շահերին:

Հայ հարուստը դրամ չէ տալիս ենիչէրիներին—պէտք է սպանել նրան. հոգ չէ, եթէ ամբողջ Եւրոպան, քաղաքակիրթ աշխարհը կորակէ ամբողջ հայ ազգը ոճրագործ անունով: Հայ թղթակիցը, հայ գրողը, հայ վիպասանը չէ համակրում այս կամ այն խմբի գործունէութեան, խոչընդոտ է հանդիսանում նրանց հասնելու նպատակներին—պէտք է սպանել. հոգ չէ, եթէ հայ գրականութիւնը, բանասիրութիւնը, հայ գիտութիւնը կը զրկվեն նշանաւոր ույժերից:

Մենք համոզված ենք, որ հայ հասարակութեան առողջամիտ խաւերը, նեղ, ստոր կուսակցական տիղմի մէջ իրանց գրիչը չը թաթախած հայ գրողները բողոքի և զայրոյթի զգացմունք են տածում այդպիսի մի անարգ ոճրագործութեան դէմ: Մենք արդէն սկսեցինք ստանալ զայրոյթի և ցաւակցութեան արտայայտութիւններ, յիշողութիւններ Արփիարի մասին:

Առայժմ չենք կարող մի քանի խօսքով չը դատապարտել այն ստոր վերաբերմունքը, որ ցոյց տուեց հայ մամուլի մի օրգանը, «Վտակը»: Այդ թերթը, որ գոնէ լսելու առաքինութիւնը պէտք է ունենար, քանի որ դաւաճանօրէն սպանվածը հայ մամուլի մի նշանաւոր աշխատաւոր է, մի հայ նշանաւոր գրող և վիպասան, բնական է գտնում ոճիրը և իր անորակելի վարմունքը արդարացնելու համար առաջ է բերում Արփիարի մի յօդուածը, գրված «Լուսաբեր» թերթում, ուր այդ նշանաւոր հրապարակախօսը խիստ և արդար կրիտիկայի էր ենթարկում Պարիզում կայացած վերջին կօնգրէսի որոշումները, ցոյց տալով թէ այդ որոշումները որքան թեթեւօլիկ, թեթեւամիտ և անմիտ են, քանի որ նրանք կարող են գրգռել 200 միլիօնաւոր մահմեդական զանգուածը թըշուառ հայ ժողովրդի դէմ:

Սթափվեցէք, պարոններ, և պատկառեցէք բացված գերեզմանի առաջ:

—

Գանձակ, 3 փետրվարի

Արփիար Արփիարեանի անսպասելի եղեռնական մահվան բօթաբեր և սոսկալի լուրը աննկարագրելի կսկիծ և խոր վիշտ պատճառեց Գանձակում, նրան համակրող շրջաններում: Բոլոր ճանաչող և համակրող լողները անխտիր իրանց զայրոյթը, անէծքը և անհուն արհամարհանքն են արտայայտում դէպի ոճրագործը:

Հանգիստ և անդորրութիւն Հայկակի, Արծրունու սիրելի աշխատակցի, «Մշակի» նշանաւոր թղթակցի բազմաչարչար ոսկորներին:

Ա. Սահակեան, Գ. Վերդիեան,
Վ. Բալիեանց, Մ. Ստեփանեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Մետերլինկի յայտնի «Մօննա-Վաննա» դրամայի ներկայացումը գրաւել էր կիրակի, փետրվարի 3-ին, հանդիսականների մեծ բազմութիւն դէպի տիկին Եավօրսկու խմբի ներկայացումը, Թիֆլիսի Արտիստական ընկ. թատրոնը:

Մօննա-Վաննայի դեր կատարող տիկին Եավօրսկայա ցոյց տուեց Մօննայի տիպի մէջ նոր հոգեբանական գծեր, մանաւանդ հետաքրքրական և ուժեղ՝ երրորդ գործողութեան տեսարաններում: Մօննա-Վաննայի բերկրութիւնը և ցնծութիւնը, որ ցոլում են նրա դէմքի վրա և աչքերում, երբ նա վերադառնում է թշնամու բանակից, փոխվում են հոգեկան թախծի, երբ Մօննային չէ աջողվում համոզել իր ամուսնուն և ժողովրդին, թէ նա մնացել է անարատ, և ապա դառնում է յուսահատութիւն, իսկ յետոյ սարսափելի վճիռ՝ վերցնել իր վրա չեղած արատը և կտրել իր կապը անցեալի հետ:

Շորշտէյն, որ կատարում էր Գուիդօյի դերը, ստեղծեց մի ամբողջացված, շատ լաւ ուսումնասիրված և հոգեբանօրէն մշակված տիպ: Գուիդօյի դերի այն ըմբռնումը, որ հանդէս բերեց Շորշտէյն, լաւագոյնն է մեր մինչև այժմ տեսածներից Թիֆլիսում: Շորշտէյնի խաղը հիացմունք առաջացրեց հանդիսականների մէջ և արժանացաւ բուռն ծափահարութիւնների:

Սիրող

—

Բալախանի, 31 յունվարի

Նախկին տարիների օրինակով այստեղ սկիզբ դրվեց սիրողների ներկայացումների. կազմվեցին փորձառու բանւոր-սիրողների խմբեր, որոնք սկսեցին մի առանձին եռանդով ու ոգևորութեամբ Կրուժօկի դահլիճում և պրօմիսլաներում հանրամատչելի խաղեր կազմակերպել...

Չորս ամսվայ ընթացքում մենք տեսանք մի շարք պիէսներ: Չորեքշաբթի, յունվարի 30-ին, նոր կազմված «Էստետիկ» խումբն էլ տուեց «Մարվող ճրագները», որի մէջ իրանց կոկիկ և մտածված խաղով աչքի ընկան տ. Սարգսեան (Աննա), օր. Ոսկանեան (Մարթա), պ. Տէր-Յարութիւնեան (Ալէքսանդր): Միւսները պահպանեցին պիէսի հարազատութիւնը, անսամբլը: Թէ ներկայացումը և թէ բանւորների նուագածու խմբի գործած տպաւորութիւնը բաւարար էր: Հետեւեալ ներկայացումը փետրվարի 9-ին է:

Այսուհետեւ երաժշտական խումբը ուժեղացած է: Նկատի ունենալով բանւորների նպատակը, ցանկանում ենք լիակատար աջողութիւն:

Յուշիկ-ժան

ԲԱԳՈՒԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

I

Ով գաղափար չունի ինչ բան է դժոխքը՝ թո՛ղ գայ Բագու, թո՛ղ գայ անվերջ ոճրագործութիւնների, բարքերի հրէշաւոր արտայայտութիւնների, կապիտալի ու աշխատանքի բռնազբօսիկ և այլանդակ պայքարի, առանց քրտինք թափելու փող ձեռք բերելու, դրամաշորթութեան ու մարդորսութեան այս չարաբաստիկ միջավայրը, ուր ամենասիրելի, ամենաարժէքաւոր իրը փողն է, իսկ ամենաանարժէքը՝ մարդկային կեանքը:

Այդ կեանքը մի փամփուշտի արժէք էլ չունի:

Ուղղակի պաշարողական դրութիւն է ստեղծված: Մութը ընկնելուն պէս կեանքը դադարում է փողոցներում, մարդիկ փակվում են տներում և տարաժամ այցելուներ դժուարանում են ընդունել...

Սարսափ է տիրում:

Գիշեր թէ ցերեկ խուլ անկիւններում, թէ բանուկ, մարդաշատ փողոցներում, ամեն տեղ, մանաւանդ հայկական կոչվող մասում, ոճիրը իր ադեպտներն ունի. երիտասարդ, կուռ բազուկներ, անգործ, երբեմն արհամարհելով ազնիւ վաստակը՝ խաղում են անմեղ ու միամիտ անցորդների հետ...

Լսվում է գնդակի վզզոց... մէկ, երկու...

Արագացնում ես քայլերդ ու անցնում:

Իսկ միւս օրը լսում ես, որ մի անմեղ զոհ էլ ընկաւ, մի ընտանիք էլ դժբաղդացաւ, զրկվեց իր միակ նեցուկից, միակ աշխատաւորից:

Ո՞ւմ էր պէտք այդ զոհը:

Ո՞վ էր ոճրագործը:

Անարխիստ, կոմմունիստ, սոցիալիստ, յեղափոխական, դաշնակցական, հնչակեան...

Ի՞նչ դիմակի տակ սակք չեն փայլում:

Այժմ հանդէս են գալիս «անկուսակցական-կուսակցականի» տարազով...

Սակայն ինչ դիմակի տակ էլ հանդէս գալու լինին, արդիւնքը միեւնոյն է—զոհեր, զոհեր ու զոհեր...

Մարդիկ խօսում են, վրդովվում, անիծում... բայց կեանքը շարունակում է խլել նոր զոհեր: Վայրենացած կրքերը չեն խաղաղվում, կարծրացած սրտերը չեն գթաշարժվում, կանգ չեն առնում նոր ոճիրների առաջ:

Հազիւ է մութը սքօղում փողոցները. առանց քաշվելու, լկտի յանդգնութեամբ խուռն բազմութեան առաջ կանգնեցնում են անցորդներին, դատարկում գրպանները, հանում վերարկուն և անցնում մի այլ տեղ, դէպի ուրիշ անցորդ:

— Ռուկի վէրխ: Չե՛ս լսում. այ քեզ...

Եւ գնդակը սուր ճչոցով ճեղքում, անցնում է:

— Կանգնի՛ր:

Բարացած կանգնում է զոհը:

— 300 ռուբլի... բեր այս ինչ տեղը...

Ինչի՞ց, ո՞վ է նա, ի՞նչ ունի—փոյթ չէ նրան:

Մեղաւոր է, թէ արդար—այդ մասին և ոչ մի խօսք, ոչ մի ծպտուն:

— Զգոյշ եղի՛ր, երեկոները շուտ վերադարձի՛ր,—ահա բագուեցու առաւօտեան աղօթքը:

Ինչ արած: Սրիկաները շատ, կեանքն անպահով, զոհերը անվերջ: Նրանց օրագիրը պէտք է որոնել գերեզմանատանը...

Օր չէ անցնում, որ մի քանի զոհեր չը լինեն:

Կարծես տական, սիստեմատիկ կոտորած է տիրում: Ֆիզշատիչները անպատիժ կերպով շարունակում են իրանց ոճրագործ խաղը քաղաքացիների կեանքի, բաղդի ու պատւի դէմ: Շանտաժիստներն ու դրամաշորթները դատարկում են հարուստի և աղքատի գրպանները և խուլիգանացած տարրերը ազատ, աներկիւղ տօնում են իրանց տօնը:

Իսկ այդ տօնը խանգարող չը կայ: Ինչ գնով էլ լինի՝ պէտք է վերջ տալ այդ բոլորին և կեանքը դնել նորմալ, գոնէ տանելի պայմանների մէջ:

Եթէ իշխանութիւնը անզօր է, թո՛ղ քաղաքացիները նախաձեռնող հանդիսանան իրանց կեանքն ու ստացուածքը ապահովելու գործում:

Աշխատակից

ՔԱՂԱՔԱԿՐԹՎՈՒՄ ԵՆՔ...

Բագու, 30 յունվարի

Ո՞վ է ասում, որ հայերս անքաղաքակիրթ ազգ ենք. այդպէս ասողների ատամները փորը պիտի թափենք, սրով, թրով պիտի մորթենք, որովհետեւ մեզ նման մի քաղաքակիրթ ու կուլտուրական ազգի արատաւորել են ցանկանում:

Այո, մենք քաղաքակրթված ենք այն տարբերութեամբ, որ քաղաքակրթված օտար ազգերը, գրադարաններ, ընթերցարաններ, թատրոններ, ուսումնարաններ, բարեգործական ու կուլտուրական ընկերութիւններ թիւն են բազմացնում, հասարակական հիմնարկութիւններ շինում, իսկ մենք, հայերս, խանութներ ենք կողոպտում, մարդկանց գրպաններն ենք «ռուկի վերխ» անելով փնտրում, 5—10 ռուբլով մարդիկ սպանում, այս ու այն կնոջ ատրճանակի ուժով ամուսնու գրկից խլում, օրը ցերեկով այս ու այն տունը մտնելով կոյս, անարատ 12—15 տարեկան աղջիկներ փախցնում, բռնաբարում, լլկում, ապա ծնողներին վերադարձնում: Եւ դեռ համարձակվում են մեզ ասելու, թէ ազգա, անմիտ ու անկուլտուր ժողովուրդ ենք:

Սոյն յօդուածս գրելու առիթը հետեւեալ քստմնելի դէպքն է, որը տեղի ունեցաւ երէկ:

«Մշակի»ն անցեալ օրը մի թղթակցութիւն ուղարկեցի՝ տեղիս վաճառական Օհանեանի մատաղահաս աղջկան փախցնելու լուրը հաղորդելով: Ես կարծեցի թէ սովորական կարգով էլ կը վերջանար, աղջկան մի օրից յետոյ յետ կը դարձնեն, իսկ մի շաբաթից յետոյ փախցնող «ղօչիին» կը հրաւիրեն իր զոհի հետ ամուսնանալու:

Սակայն այժմ սովորականից էլ փոքր ինչ առաջ գնացինք, դէպի հայկական կուլտուրան:

Թող ընթերցողը չը ձանձրանայ, որովհետեւ վերին աստիճանի հետաքրքրական դրամա է սա էլ, որի մասին ամբողջ քաղաքն է խօսում և սպասում, թէ ինչպիսի մանրամասնութիւններ պիտի հաղորդեն հայ թերթերը:

Շուլավերցի մի պատանի մտնում է շամախեցի Օհանեանի կօշիկեղէնի մագազինը ծառայելու, ուր և մնում է մի քանի տարի: Օհանեանը բացի մի աղջկանից, որը սովորում էր իգական գիմնազիայի առաջին դասարանում, ուրիշ զաւակ չէ ունենում: Աղջկայ մայրը, ինչպէս հաւատացնում են, մտադրվում է իր մինուճար աղջկան տալ իրանց գործակատարին: Հայրը ձեռնպահ է մնում. աղջիկը, երեխայ, դեռ գաղափար չունի թէ ինչի՛ համար են ամուսնանում: Գործակատար Գերասիմից մի մանաւոր մատանի էլ են վերցնում:

Անցնում է երկար ժամանակ. աղջիկ երեխան օրէ-օր ընտելանում է, ինքնաճանաչութեան մէջ է մտնում, սկսում է իր չարն ու բարին ճանաչել: Իսկ երիտասարդ գործակատարը [illegible] դէպի այդպէս [illegible] փոփոխութիւն է անում, [illegible] գործակատարից: Բայց մի գեղեցիկ օր նոր ծանօթացած օրիորդը հրաժարւում է իր փեսացուից և [illegible] յայտարարում է, թէ անկարող է ամուսնանալ այն երիտասարդի հետ, որին չէ կարողանում սիրել, [illegible] գիմնազիայի [illegible]:

Ծնողները մի օր երիտասարդ գործակատար փեսային յայտնում են իրենց աղջկայ մտադրութիւնը, սակայն գործակատարը պնդում է [illegible] ամուսնանայ:

Օհանեանը, խեղճ մարդ լինելով, խնդրում է գործակատարից հեռանալ խանութից և իրան ազատ թողնել, որի համար էլ վճարում է 400 ր.—վեց ամսվայ ամբողջ ռոճիկը: Երիտասարդը մտածում է և փողը ստանալով [illegible] թողնել Օհանեանենցը.

Անցնում է մի քանի ամիս. գործակատարը նորից պահանջում է [illegible], համակրանք է գրում ու սպառնում է փախցնել, սպանել և այլն, [illegible] աղջկան [illegible] տանը փակված պահել:

Բայց մինչև երբ:

Օհանեանը, [illegible], այդ փակված աղջկան [illegible] մասին իշխանութեան չէ յայտնում, այլ դիմում է աւելի նոր մարդկանց, ասելով: «Քանի որ մեր աղջիկը նրան չէ սիրում, ուստի [illegible] որ երիտասարդը սիրում է Բաքուի աղջիկներից, [illegible] կանեմ, միայն թէ հանգիստ թողնէ մեզ: Բայց այդ էլ անօգուտ:

Սարքւում է մի [illegible] «քաղաքակրթված» [illegible], [illegible] և օրիորդները: Հրաւիրում են օրիորդին և ծնողներին, որոնք [illegible] գալիս են:

Օրիորդը պատասխանում է.

—Պարոններ, տիկիններ և օրիորդներ, խնդրեմ, [illegible] ինձ վրա բռնութիւն գործ մի դնէք. ես այդ պարոնի հետ ամուսնանալ, կեանք կապել չեմ կարող, [illegible], իսկ եթէ դուք ուժով էք [illegible], [illegible] սպանեք... Մի կողմով այլ լինել էլ կարող. այդ դուք էլ պիտի խմանք:

Հարցը փակվեց է:

Անցնում է մի քանի օր. ամսիս 26-ին երեկոյեան գործակատար երիտասարդը 4—6 գինու մարդկանցով մտնում է Օհանեանի բնակարանը և փայլուն ատրճանակներ սպառնալով [illegible] դուրս քաշում ու պատրաստ սպասող կառքի մէջ նստեցնում օրիորդին անհետանում:

Երկու օր պահելուց յետոյ վերադարձնում են: [illegible] որ ծնողներին [illegible] սպառնալիքներ են եղել [illegible], որ երկու օր [illegible] փախցրած աղջկայ մասին ոստիկանութեան [illegible] չեն յայտնում, սպառնելով որ այդպիսի մի քայլ կարող է [illegible] ների ամբողջ տունը...

Երբ աղջիկը արտասուքը հեղեղի նման թափելով սկսում է պատմել իր [illegible] իր երկու օրվայ [illegible]... ծերունի հայրը [illegible] աղջկան խնդրելով, որ [illegible], ամուսնանայ, որովհետեւ ուշ է:

—Հայր, անկարող եմ, յաւիտեան անամուսին կը մնամ, միայն չեմ կարող կեանքս կապել [illegible] հետ, որին չեմ սիրում:

Հայրը, անկարող լինելով աղջկան համոզել, անկարող լինելով և այդ անպատւութիւնը տանել, [illegible] ու ատրճանակի մի գնդակով վերջ դնում է իր կեանքին:

Քաղաքում շատ բան են խօսում, սակայն այդ [illegible], [illegible]. Դեռ Օհանեանները [illegible]:

Կը գրեմ, եթէ մանրամասնութիւններ ծագեն:

Ս. Գարագաշ

ՄԵՆՇԵՒԻԿՆԵՐԸ ԵՒ «ԲԵԼԵԱՐ» ԳԻՒՂ-ՈՒՄ

(Ջիվանշիրի գաւառից)

Աղդամ, 10 յունվարի

[illegible] ռանց որևէ [illegible] անցնում են: Սրանից մի քանի օր առաջ Աղդամում [illegible] [illegible] պաշտօնեան [illegible] չէ հաջողում, գիւղացին [illegible] խոնաւ [illegible] [illegible] լինում... Ահա թէ ինչու է [illegible]: Ցարգիլ «Մշակի» այդ [illegible] առարկայի վերաբերեալ զետեղված մեր մի քանի յօդուածները, «Բժշկական հարցը գաւառում», «Էպիդեմիան գաւառում» վերնագրերով, արձագանք չը գտան բանիմաց և ինտելիգենտ հասարակութեան խաւերի մէջ, և այդ ամենակարեւոր հարցը տակաւին մնում է մեզանում առանց ուշադրութեան։ Արդարև, եթէ մեր գիւղական աշխարհում ապրող հասարակութիւնը ինքնագիտակցութեան գալով կարողանար ինքն իրան պահպանելու եղանակը իմանալ, կարողանար ինքն իրան համար մտածել, հոգալ, այն ժամանակ հարկաւոր չէր նրան դրսի, բանիմաց դասակարգի օգնութիւնը։ Սակայն քանի նա տգէտ է, քանի ինքնագիտակցութիւնը նրա մէջ շատ և շատ ուշ է զարգանալու ու, գլխաւորապէս, քանի նա խարխափում է դառն չքաւորութեան և խաւար մթնոլորտի մէջ, նրան օգնելը անհրաժեշտութիւն է…։

Գիւղացի հիւանդը մեռնելուց յետոյ, ննջեցեալի տունն են հաւաքվում գեղջկուհիները և գիւղացիները և ապա սկսում իրանց փանտազիաները, առասպելները։ Մէկը ասում է. «Ես այդ խեղճի արազը կանուխ էի տեսել, որ պէտք է մեռնէր»։ Մի ուրիշը ասում է. «Աստուծու բանն ա, ո՞վ կը կարայ Աստուծու՛ վճռին հակառակ կանգնի. հիւր ճկատի ինչ կիրած ա, պէտկա էն քաշի…»։ Երրորդը մի ուրիշ բան է ասում։ Մէկը չը կայ, որ ասի՝ երազը ինչ անի, կամ Աստուած ինչ անի, որ հանգուցեալը լաւ չէ եղել հագնված ու մրսելով հիւանդացել է, կամ լաւ չէ եղել կերակրվելիս, կամ տան, գետնափորի… խոնաւութիւնն է հիւանդացրել և կամ ունեցել է մի թեթև հիւանդութիւն, որը բժշկող չէ եղել և այդ թեթև հիւանդութիւնը զարգանալով նրա մէջ մահացրել է նրան։

Գիւղացին տակաւին խարխափում է խաւար ու մռայլ մթնոլորտի մէջ։ Գիւղացու տղան վախճանվեց, և ուրեմն, քանդվեց նրա տունը. սակայն պէտք է նկատել, որ նա քանդվում է, քայքայվում է երկու կողմով. մի կողմից աշխատաւոր ձեռքից է նա զրկվում, միւս կողմից նա պէտք է պարտք անի, կամ ծախի իր դառն եզը, կովը, գորգերը (խալիչան), որպէսզի «հաժուս-ղրեաթ» բանեցնէ ու կարողանայ իր ննջեցեալին պատւով ճանապարհել, բոլոր իր համագիւղացիներին ճաշի հրաւիրել, գինով, քելեխով պատւել, որպէսզի այդպիսով նրա ննջեցեալը արքայութիւնից բաժին ունենայ։ Գիւղացին իր ննջեցեալի պատճառով ճաշ ու գինի տալով ժողովրդին, այնուհետև վստահացած է համարում իրան, որ իր ննջեցեալը արքայութիւնից բաժին է ստանալու։ Ահա թէ ինչն է ստիպում գիւղացուն ճաշ ու գինի և կամ «քելեխ» տալ ժողովրդին իր ննջեցեալի պատճառով։ Աստուած էլ կեանք տայ մեր քելեխակեր ժողովրդին, որ այդպիսի դէպքերում իսկոյն միահամուռ համախմբվում է եկեղեցու կամ ննջեցեալի տիրոջ դուռը։ Սակայն մի ուրիշ անգամ այդ ժողովուրդը միևնոյն ննջեցեալի տիրոջ «չափարն» է քանդում գաղտնի կերպով, այրելու համար, չը մտածելով որ այդ «չափարը» քրտինքով է շինած, շինելը շատ դժուար է։

Մամուլը շատ զբաղվեց «քելեխակերութիւնը» վերացնելու համար, սակայն դժբաղդաբար նա չը հասաւ իր նպատակին։ Գոնէ եթէ չը լինէր քելեխակերութիւնը, ննջեցեալի տէրը այնքան էլ չէր շուարվի, նեղվի, մանաւանդ այսպիսի տարիներ։

Սակայն ո՞վ կը լինի այդ չարիքը վերացնողը։

Մամուլի ներկայացուցիչները պարտաւոր են նորից զբաղվելու այդ հարցով։

Անհրաժեշտ է վերացնել քելեխակերութիւնը և՛ գաւառում։

Բ. Զաքարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Դերասան Իւժինից հայոց դրամատիկական ընկերութեան վարչութիւնը ստացել է հեռագրով հետևեալ պատասխանը. «Ձերդ շնորհակալութիւն թանգագին արուեստակից ընկերներին և մեծարգոյ հայոց դրամատիկական ընկերութեան՝ ազգակցական ողջոյնի համար»։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 6-ին, կովկասագիտական բարձր դասընթացքներում (Ալէքսանդրեան այգի) տեղի կունենայ Սմիրնովի դասախօսութիւնը Կովկասի օգտակար հանքերի մասին։ Վաղը, երեկոյեան ժամը 6-ին, նոյն դասընթացքներում կը կայանայ Խ. Աբուլաձէի դասախօսութիւնը վրաց լեզուի մասին։

◆ Թիֆլիսի 3-րդ ոստիկանական մասում գտնվող՝ Կուկնէյնի, Բազարնի և Ներսիսեան փողոցներում առևտուր անող վաճառականները, որոնց թիւը հասնում է 64-ի, դիմեցին Պետական Դումային՝ խնդրելով նիւթական օգնութիւն, որոնք քայքայվել են 22 դեկտեմբերի 1905 թ. Թիֆլիսում եղած պօգրօմներից և որոնց վնասը հասնում է 300,000 րուբլու։

◆ Փետրվարի 3-ին, երեկոյեան ժամը 10-ին, Պօչտովայա փող., № 29 տանը, Վանօ Օնիկաշվիլու բնակարանում ոստիկանութիւնը գտաւ 10 ռումբ, որից երկուսը պատրաստված էր նետելու համար, 8 զանազան սիստեմի ատրճանակներ և մօտ 100 փամփուշտ, մի քանի արշին Բիկֆորդովի շնուր և շատ ուրիշ պայթուցիկ նիւթեր, ինչպէս և կաղապարներ՝ ռումբեր պատրաստելու համար։ Բացի դրանից գտնված է 2 կնիք հետևեալ ստորագրութեամբ՝ «Նոր տէրրօրիստների խմբակ» և այս կուսակցութեան կանոնադրութիւնը։ Ձերբակալված են Թիֆլիսի գաւառի բնակիչ Գեօրգի Ամիրանաշվիլի և Թիֆլիսի մէշչանին Զախարիյ Տուրիկեանց։ Երկուսին էլ ձերբակալում են ռումբեր պատրաստելու րոպէին։

◆ Փետրվարի 3-ին, առաւօտեան ժամը $7^1/_2$-ին, Մօլօկանսկի փողոցում, Թիֆլիսեցի Իվան Գօգնիէվի գինետունն են մտնում երկու չարագործներ, որոնցից մէկը զինված է լինում «Նագան» ատրճանակով, իսկ միւսը դանակով, և մահվան սպառնալիքով Գօգնիէվից փող են պահանջում։ Երբ վերջինս մերժում է, չարագործները ուժով դուրս են բերում նրան փողոց և երկու վէրք են հասցնում ատրճանակից նրա ձախ կողքին և երկու վէրք էլ պարանոցին և ձեռքերին։ Գօգնիէվի աղաղակներին վրա են հասնում ոստիկանական պաշտօնեաները և անօնիմ ընկերութեան ծառայողների օգնութեամբ բռնում են չարագործներին հէնց տեղնուտեղը։ Բռնվածների ազգանուններն են. Թիֆլիսի գաւառի Սագարէջօ գիւղացի Շաքրօ Տէր-Գաբրիէլեանց և Շաքրօ Սօլօմօնօվիչ Դարխսպանաշվիլի։ Գօգնիէվին ուղարկել են Միքայէլեան հիւանդանոցը։

◆ Փետրվարի 8-ին, Դուշէթի գաւառի գիւղացիներ՝ Սիմէօն և Մօիսէյ Սէտուրիշվիլիները յայտնել են ոստիկանութեանը, որ իրանց հօրեղբօրորդի համանուն գիւղացի Սէտուրիշվիլին, գալով Թիֆլիս աշխատելու, ահա մի շաբաթ է, որ տուն չէ վերադարձել։ Ոստիկանութեան ձեռք առած միջոցներից պարզվեց, որ Սէտուրիշվիլուն սպանել են սրանից տաս օր առաջ Դեսիժօնովսկի հրապարակում, № 33 տանը, և դիակն էլ թաղված է բակի մէջ։ Սպանութիւնը կատարել է իջևանատան դռնապան Նիկօլայ Նադիրաշվիլին, որը պարզութեամբ խոստովանեց իր յանցանքը և ցոյց տուեց, թէ որտեղ է թաղված դիակը։ Սէտուրիշվիլուց գողացված իրերը և 116 րուբլի փողը յետ է խլված։ Նադիրաշվիլին ձերբակալված և յանձնված է դատարանին։

◆ Փետրվարի 3-ին, երեկ. ժամը 6 և կէսին, Ելիսավետինսկի փողոցում, № 57 տանը, Լիֆէրի բնակարանի խոհանոցում, անզգուշութիւնից հրդեհ ծագեց։ Կրակը իր ժամանակին նկատվեց և հանգցրին։ Վնասը հասնում է 300 րուբլու։

◆ Փետրվարի 3-ին, երեկ. ժամը 8-ին, Մայսուրաձէի և Խօջափարուխօվի քարվանսարայում, պարսկահպատակ Միրզա Եահ-Խան Ալասկարօվի խանութից գողացել են 3000 րուբլու զանազան ոսկեղէն և արծաթեղէն, ինչպէս նաև խանութում եղած «Նագան» ատրճանակը և թոյլատրիչ վկայականը։ Չարագործները մտել են խանութի տակի սենեակից, առաստաղը ծակելով։ Այս սենեակում նրանք թողել են մի անցաթուղթ Իվան Մանջավիձէի անունով, լօմ, սղոց և սանդուխքի նման հիւսած թոկ։

◆ Փետրվարի 1-ին, երեկ. ժամը 6 և քառորդին, Բազարնայա փողոցում, Երիւանօվի տանը կաշեղէնի խանութ ունեցող Թիֆլիսի 2-րդ կարգի վաճառական Ալէքսանդր Շարբաբչէվի մօտ մտնում են չորս զինված չարագործներ և, ատրճանակներն ուղղելով խանութում գտնվողներին, պահանջում են տեղներից չը շարժվել, իսկ նրանցից մէկը մօտենալով գանձարկղին, հանում է 150 րուբլի փող, որից յետոյ չարագործները կրակելով մի անգամ Շարբաբչէվի վրա և վիրաւորելով նրան ձախ ոտքից ծանր կերպով՝ դուրս են գալիս խանութից և փախչում են անհետ։

◆ Փետրվարի 1-ին խուզարկու ոստիկանութեան կառավարիչ Եպուշէվսկին ձերբակալում է շամախեցի Մաշադի Մահմէդ Տէլի-օղլուն և նրա սիրուհի Եվգենիա Չիրվեակօվային, որոնք մեղադրվում են Բագւում Մաշադի Զէյնալ Իսմայիլ-օղլի Աբասօվից 975 րուբլու զանազան թանգագին իրեր գողանալու մէջ։ Գողացված իրերից Չիրվեակօվայի մօտ գտնվում է ոսկէ ժամացոյց և մեդալիօն 280 րուբլու արժողութեամբ։ Ձերբակալվածներին շտապով ուղարկելու են Բագու՝ դատական իշխանութեան ձեռքը յանձնելու համար։

◆ Պետերբուրգում հրատարակվող «Ստենօգրաֆ» թերթի խմբագրութիւնը, ձեռնարկելով սղագրութեան Ռուսաստանի մէջ տարածման դրութեան հարցի վիճակագրական ուսումնասիրութեան, խնդրում է բոլոր այն անձանց, որոնք որևէ կապ ունեն սղագրութեան հետ (սղագիրներ, ուսուցիչներ), հաղորդել խմբագրութեան իրանց հասցէները, որոնց, ստանալուց յետոյ, խմբագրութիւնը կուղարկէ հարցական թերթեր։ Խմբագրութեան հասցէն է. Ред. журнала „Стенографъ“. С.-Петербургъ, Невскій, 65.

◆ «Մշակի» վերջին (№ 27) համարում սպրդել են հետևեալ սխալները։ Առաջին երեսում, Պետերբուրգի լուրի մէջ «Պերրի յաղթանակ» խօսքը սխալ է թարգմանված։ Իսկ չորրորդ էջում, Կօստրօմայից հեռագրի մէջ այսպէս պէտք է կարդալ. «Հոգևոր դպրոցի գարդերոբնու (հանդերձարան) մէջ»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Փետրվարի 1-ին, ցերեկվայ ժամը 4 և կէսին Մաշադի-Իւսուֆ Հուսէյն-օղլու փուռում ծխնելոյզի անկանոնութիւնից հրդեհ առաջացաւ։ Կրակը հանգցրեց հրդեհաշէջների խումբը։ Վնասը հաշւում են մօտ 300 րուբլու չափ։ Տունը ապահովագրված է Թիֆլիսի քաղաքային վարկի ընկերութեան մէջ 15,000 րուբլով։

◆ Փետրվարի 1-ին, գիշերով, Պուշկինսկի փողոցում, Հասան Մահմեդ-օղլու խանութից անյայտ անձինք գողացել են մօտաւորապէս 200 րուբլու ապրանք։

◆ Փետրվարի 1-ին, երեկոյեան ժամը 7-ին, Երևանեան հրապարակում, էլեքտրաքարշի վագօնի հետևի կանգնատեղիից, վայր ընկաւ Թիֆլիսեցի Սէլիվան Լօմժարեանը, 20 տարեկան, որի ձախ ոտի բութ մատը կտրեց էլեքտրաքարշի վագօնը։ Նրան տարան Միքայէլեան հիւանդանոց, ուր վէրքը փաթթելուց յետոյ, արձակեցին տուն։

◆ Փետրվարի 2-ին, Ամատունեվսկի փողոցում, № 34 տանը, անյայտ չարագործներ պատուհանով մտնում են Իվան Ժերբաշվիլու բնակարանը, բայց երբ տանեցիք արթնանում են, չարագործները ատրճանակներով սպառնալով կորզում են 100 րուբլու արժողութեամբ մի վերարկու և սպիտակեղէն ու փախչում։

◆ Փետրվարի 2-ին Թիֆլիսի պօստային պաշտօնեայ Տիգրան Տէր-Առաքելեանի բնակարանից, որ գտնվում է Մօղնու փողոցում, № 8 տանը, կեղծ բանալիով անյայտ մարդիկ գողացել են 210 րուբլու տնային զանազան իրեր։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Բագւի րէալական դպրոցի փակված VI և VII դասարանների համարեա բոլոր աշակերտները մտել են հանրակրթական դասընթացքները։ Դասընթացքներում բացվել են երկու նոր զուգընթաց բաժանմունքներ, որոնց համար դասընթացքների բիւրօն հրաւիրել է րէալական դպրոցի փակված դասարանների դասատուներից մի քանիսին։

◆ Յունվարի 27-ի ռումբի պայթումից յետոյ, Կասպիական-սև ծովեան նաւթային ընկերութեան վարչութիւնը Պերսիդսկի և Կօլիւբակինսկի փողոցների անկիւնում շինել տուեց երկու մեծ լապտերներ շինութիւնը պաշտպանելու նպատակով։ Այժմ նոյն նպատակով պետական բանկի Բագւի բաժանմունքը նոյն տեսակ լապտերներ է դրել՝ մէկը Մերկուրօվսկի և Կրասնօվօդսկի փողոցների անկիւնում, միւսը՝ բանկի բակում։

◆ Հինգշաբթի օրը գաղտնի ոստիկանութեան կարգադրութեամբ ձերբակալվեցին տեխնիքական դպրոցի սաներ՝ Պետրօվը և Իվանեանցը։ Նրանց բնակարաններում խուզարկութիւն կատարվելուց յետոյ, վերջինս արձակվեց, իսկ Պետրօվը, որ այս տարի աւարտելու է դպրոցը, դեռ ոստիկանութեան հսկողութեան տակ է գտնվում։

Այս ձերբակալութիւնները կապ ունեն պահնորդական բաժնի կառավարչի կեանքի դէմ կատարված մահափորձի հետ, որի ժամանակ ռումբից սպանվեց տեխնիքական դպրոցի աշակերտ Կուլիբեկօվը։

◆ Նախկին նահանգապետ Օգինցօվը Բագւում մտցրել էր տնային դռնապանների ինստիտուտ, որոնք, բացի իրանց տէրերի վերաբերութեամբ ունեցած պարտականութիւններից, հերթապահութիւն էին անում փողոցներում և աջակցում էին ոստիկանութեան։

Այժմ, ինչպէս ասում են, իշխանութիւնը ուշադրութիւն է դարձրել այդ գործի վրա և մտադրութիւն ունի վերստին վերանորոգել դռնապանների յիշեալ ինստիտուտը այն կանոններով, որպիսիք գոյութիւն ունեն Պետերբուրգում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամէն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—$9^1/_2$—2 ժ. ատամի հիւ.
Ձ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՁԷԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1^1/_2$—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԽՐԵԿՈՆՆԵՐԸ
Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ. և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Լոյս տեսաւ
ԲԱԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ԿԱՆՈՆՆԵՐ
Գինն է 40 կոպէկ
Դիմել գրավաճառներին, կամ հեղինակին՝
Эчміадзинъ, архимандриту Бабкену.
(հ. կ.) 10—1

«ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցում կարելի է ձեռք բերել ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ գրքերից հետևեալները.

Սիրաք եւ Սամուէլ, բարի hօր կրթական դասեր . . .	30 կ.
Դրախտի ընտանիք	50 կ.
Վերջալոյսի ձայներ	1 ր. »
Մարգարիտ արքայութեան	30 կ.
Խաչի ճառը	30 կ.
Ժամանակ եւ խորհուրդ իւր	15 կ.

Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“ Г. И. Галустянцу.
2—1

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1908 թ.
„ԳՈՐԾ“
Գիտական, տնտեսական եւ հասարակական
Հանրամատչելի
երկշաբաթաթերթի
(32—40 երես)

Բաժանորդագինն է՝ փետրվարից մինչև տարվայ վերջը (22 համար, հանդէսի ձևով).

Թիֆլիս և դուրսը	2 ր.
Արտասահման	3 ր.
Թիֆլիս և Թիֆլիսից դուրս, հատով՝	10 կ.

Բանւորները և ուսանողները կարող են բաժանորդագինը մաս-մաս վճարել. կէսը սկզբից, մնացածը յուլիս ամսին։

Թերթին աշխատակցելու են՝
Բ. Իշխանեան, բժ. Տ. Իսախանեան, Ղ. Տէր-Ղազարեան, Ալ. Ռուբէնի, Եսայեմ, Նարօ, Դ. Պիճիկեան, Մ. Ռօբերտ, Նորեկ, Յ. Տէր-Յովհաննիսեան, Մ. Մանուչարեան, Կ. Հզօրեան, Կատինեան, Յ. Կարախանեան, Խ. Սամուէլեան, Յ. Յակոբեան, Սարգիս, Ս. Մարգարեան, Մ. Եսայեանց, Ռ. Իսախանեան, Ա. Մարտունի և ուրիշները։
Հասցէն՝ Тифлисъ, редакція журнала „Гордзъ“.
Արտասահմանից՝ Tiflis, Redaction du journal „Gordz“.
Դրամները և պատուիրած նամակները խնդրում ենք անպատճառ ուղարկել հետևեալ հասցէով՝ Головинскій проспектъ, „Парижскій магазинъ“, Погосу Оганджанянцу.
Խմբագիր-հրատ.՝ Մ. ՍՏԱՄԲՕԼՑԵԱՆ
(հ. հ. կ.) 3—1

Մօտ օրերս լոյս կը տեսնի Բագւում
„ՍՈՒԼԻՉ“
շաբաթաթերթը, որ նուիրված է լինելու Բագւի նաւթարդիւնաբերական բանւորների շահերի պաշտպանութեան։
Բաժանորդագինն է՝ տարեկան—2 ր. 50 կ.
» կէս տարին—1 ր. 25 կ.
Առանձին համարները—5 կոպէկ
Բաժանորդ գրվելու համար և այլ գործերով դիմել՝ Балаханы, въ Бюро „Союза нефтепромышленныхъ рабочихъ“, для редакціи „СУЛИЧЪ“.
(Ե. Կ.) 3—1

ԱՎ. ՍԱՐԳԻՍՕՎԻ
այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և կովկասեան տեսակի մրգատու ծառեր։ Հասցէն Սարգիսօվ, ԱՆԴՐԿով. երկ., Ավսարգիսօվին։ Կատալոգը ուղարկվում է
ՁՐԻ
(Ե. Հ. Չ.) 15—4

ԲԺԻՇԿ
Մելիք-Էյնաթեան
Վեներական, միզասեռական և մորթու
Հիւանդութիւններ
Ընդունելութիւն | 9—10 առաւօտ.
| 5—7 երեկ.
Կսենիեվսկայա փող. № 6, Վեացել հիւրանոցի մօտ։
(Ե. Հ. Չ.) 30—15

ԲԺԻՇԿ
Ա. Ամիրխանեան
ՆԵՐՔԻՆ
Հիւանդութիւններ
Ընդունելութիւն | 10—12 ժ. առաւօտեան
| 6—7 ժ. երեկոյեան
Րtիշչեվսկայա փող. № 22.
(Ա. Օ.) 10—2

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“
գրավաճառանոցում վաճառվում է
Ց. Դաղբաշեանի
Ընդարձակ
ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ
Բառարանը
ԳԻՆՆ Է 8 ՌՈՒԲԼԻ
Կազմած՝ 8 ր. 50 կ., 9 ր. և 9 ր. 50 կ.։
Գումարով գնողներին բաւարար զեղչ։ 5—2

Հրատարակութիւն Գ. Գալստեանի. № 26
ԱԴՕԼՖ ՌՈՒԴԷ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԵԹՕԴԻԿԱ
Փոխադրեց գերմաներէնից
Յովհաննէս Տէր-Միքայէլեան
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Ներածութիւն. Պատմութեան նախաշաւիղների ուսուցումը. Պատմութեան ուսուցումը. Աշխարհագրութեան ուսուցումը. Բնագիտութեան ուսուցումը. Հայոց լեզուի ուսուցումը. Թուաբանութեան ուսուցումը. Երկրաչափութեան ուսուցումը. Ձեռքանական ճշմարտութիւններ։
ԳԻՆՆ Է 1 ր. 50 կ. կազմած 1 ր. 90 կ.
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустяну.
Ստացված է և նոյն տեղը վաճառվում է
Հ. Էֆրիկեանի
ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ
Բ. մասը
ԳԻՆՆ Է 3 ՌՈՒԲԼԻ
5—3

Տղամարդկանց զգեստների մեր յատուկ կտորները, իրանց լաւ յատկութեան համար, ռուսական և արտասահմանեան ցուցահանդէսներում արժանացան մեդալների։ Նրանց գերազանցութիւնը կայանում է հետևեալ յատկութիւնների մէջ. շատ դիմացկուն, գործնական, ճաշակով և գեղեցիկ։ Պատուէրատուներին իւրաքանչիւր արշինը ուղարկվում է գործարանային գնեով։



4 ր. 50 կ., լաւ տեսակը՝ 5 ր. 25 կ., 6 ր. 25 կ., 10 ր., 14-ով գործարանը ուղարկում է վերադիր վճարով $4^1/_2$ արշ. կտոր ամբողջ կօստիւմացուի համար.— անգլիական շէվիոտ կամ ֆրանսիական զունաւոր տրիկօ, սև, մուգ կապոյտ, շագանակի, մուգ սև, ձիթենու գոյների, քառակուսի շրջանակներով կամ առանց սրա։ 3 կամ աւելի հատ պահանջողները կստանան բոլորովին ձրի աստառը։
ՁՐԻ ԱՌԱՆՑ ՌԻՍԿԻ
Իմ այս առաջարկութիւնը ռէկլամ չէ, և որպէսզի ապացուցանեմ, պարտաւորվում եմ անպայման յետ ընդունել որևէ պատճառով դուր չեկած կտորը և վերադարձնել փողերը ամբողջովին։ Պահանջները խնդրում եմ հասցէագրել՝ Въ главную контору фабрики шерстяныхъ издѣлій Зигмунтъ Розенталъ г. Лодзь.
9—8

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
«ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻԹԻՄ»—„MESSAGERIES MARITIMES“
Քարանտիներ վերցված է

11/24-ին փետրվարի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 4-ին, „Bosphore“ շոգենաւը, հանդիպելով Տրապիզօն, Սամսօն, Կ. Պօլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։

Ուղղակի ճաղորդակցութեան տոմսակներ՝ մինչեւ Պարիզ, Նիւ-Եօրք եւ Շանխայ (Չինաստանում), Հեռաւոր Արեւելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել՝ ընկերութեան Թիֆլիսի գործակալ Պ. Վ. Յակոբեանին, Նախկին Արծրունու գալէրէյում թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608։ Գրասենեակը բաց է՝ 10—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան ամենայն օր, բացի կիրակի օրերից։
1—1

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мурдусіакоповъ съ С-ми. Большая Ванкская д. Семинаріи № 3.